

Սիս



ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

1971

Յուլիս - Օգոստոս

1971

July - August

7 - 8



# S I O N

VOL. 45

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM  
A BIMONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

Editor-in-chief: Bp. Shahe Ajamian      Editor: Ara Kalaydjian



St. James Press  
Jerusalem

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ


Ա.

Աւելի քան յիսում տարի անդադար կրկնած ենք թէ հայեցի կրթութիւնն է միայն որ պիտի կարենայ տարագիր բազմութիւնները հայ պահել արտասահմանի մէջ, անոնց ընծայելով հիմնական, խոր եւ մեր ժողովութիւնի իմացական եւ հոգեկան մշակոյթի ոգիով թրծուած դաստիարակութիւն մը:

Եւ առկայն «հայեցի կրթութիւն» արտայատութիւնը, տեղի եւ անտեղի կրկնութեան պատճառով գրեթէ կորսնցուցած է իր ակզրնական իմաստոր. ոչ միայն այդ, այլ մանաւանդ ներկայիս նման՝ արժանյաժնութիւն մը բոլորովին տարբեր պարունակութեամբ կը ներկայանայ մեզմէ շատերու մտածումին: Իրապէս, ի՞նչ է «հայեցի կրթութիւն»ը, ի՞նչ է նպատակը, ինչպէ՞ս գործադրութեան կը գրուի, ի՞նչ սկզբունքներով կը զարգանայ:

Իրբեւ պատասխան, ցաւ ի սիրու պէտք է ընդունիլ թէ մասնաւոր ծրագրով մը չէ որ կը ջամրուի այդ կրթութիւնը արտասահմանի հայ դպրոցներէն ներս Տարագրութեան սեւ օրերէն ետք, գաղթակայաններու եւ թիթեղաւաններու մէջ հապճեպով կեանքի կոչուած վարժարանները՝ հայկական տարրական կը թութիւն մը միայն կրնային տալ, չեշտը զնելով առաւելաբար հայ լեզուի եւ հայ եկեղեցիի պատճութեան ուսուցումին վրայ: Այդպէս, գժուար պայմաններու տակ պարտազրուած ըլլալով սկսիլ իրենց կեանքը, այդ վարժարանները իրենց հիմնադրութեան տարիէն մինչեւ այսօր շատ քիչ - չըսելու համար ոչ մէկ փոփոխութիւն մատցուցած են իրենց դպրոցական ծրագիրներուն մէջ. աւելին, «հայագիտական» նիւթերու դասաւանդումը դարձած է, դպրոցներու մէծամասնութեան մէջ, մեքենական աշխատանք՝ անխուսափելի պարտաւորութիւն մը իրբեւ, յանձնուած շատ յաճախ իրենց նիւթին չտիրապետող կամ սէրն ու նուիրումը չունեցող անձերու: Իրագործուած շատ քիչ բարեփոխումները կատարուած են ընդհանրապէս անհատական նախաձեռնութեամբ, եւ արդիւնք են բազմաթիւ խոչընդոտներու, վերապահութիւններու եւ անբարեացակամութիւններու յաղթահարման: Դէպի լաւը ձգուող որեւէ բարեփոխում կը նկատուի ուսնձգութիւն մը «հայեցի դաստիարակութեան» գալուածէններս, որովհետեւ այդպիսի ճիգ մը անպայմանօրէն, իր դէմ կը գտնէ քարացած մը տայնութիւններ՝ որոնք եղածը պահպաններու արդար այլ այս պարագային կեղծ լողունգին տակ կ'ուզեն պարտկել անկարողութիւններ, անկամեցողութիւններ եւ որեւէ փոփոխութեան մը առջեւ զգացուած մարդկային տկարութիւններ ու երկիւղներ:

Մեր վարժարաններէն ներս երկու ծայրայեղութիւններ



162 - 98

1938 Զ ա մ ի

տեղ ունին. «Հայեցի դաստիարակութիւն»ը կամ լքուած է բոլորովին, ճգուած ինքն իր բախտին, եւ կամ ընդհակառակն՝ հասկալի բայց ոչ արդարանալի խանդավառութեամբ մը՝ այդ կըրթութիւնը վերածուած է մեր ժողովուրդի պատմութիւնն ու մըշակոյթը ջատագովող, զմեղ ջատ բարձր եւ մեծարժէք ցեղ մը առանց փաստարկելու հաստատող դրութեան մը։ Այսպէս է որ, մեր վարժարաններու շրջանաւարտները կամ գրեթէ ոչինչ ունին իբրև գիտելիք ու ոգի այդ գլաստիարակութիւնն»։ Եւ կամ՝ ընդհակառակը՝ իրենց պատկանած ժողովուրդի վերակայութեան անվիճելիորէն համոզուած, — կը մտնեն կեանք։ Սակայն երկու պարագային ալ արդիւնքը նոյնն է. առաջինները, չկարենալով կոթնիլ գիտելիքներու յենարանին՝ կը կորսուին — կը ձուլուին. մինչ երկորդները, այս հսկայ աշխարհին ու բազմամիլիոն մարդկութեան մէջ նետուած՝ կը գիտակցին իրենց ջամբուան «դաստիարակութեան» շա՞տ խախուա հիմերուն, ու հիասթափ եւ յուսախար՝ յաճախ կը մտնեն առաջիններուն ճամբան, զիրենք դէպի օտարացում առաջնորդող։ Զկայ հայեցի իրաւ դաստիարակութեան միջին եղր մը, մակարդակ մը, որ հայ տղուն տայ ճըշդըրիտ այլ ամբողջական պատմութիւնը մեր դարաւոր կեանքին, ստեղծագործութեան, ոգորումներուն եւ իրազործումներուն։ Կրթութիւն մը՝ որ բաղդատական ուսուցումով մեզ իբրեւ ժողովուրդ կշիռին մէջ դնէ ուրիշ հաւաքականութիւններու հետ, գտնէ մեր առաջինութիւնները, այլ հաստատէ նաեւ մեր թերիններն ու պակասները. դաստիարակութիւն մը՝ որ նո՞ր չունչ և կեանք տայ, նո՞ր մօտեցումով մը, թարգմանչաց տօնին եւ Վարդանանցին, Սասունցի Դաւիթին եւ Անդրանիկին, Արարատին եւ Վանայ Ծովակին. դաստիարակութիւն մը, ի վերջոյ, որ, հիմնուած անաշուարանութեան, ինչպէս նաեւ հայրենիքի եւ ազգի սիրոյն վրայ՝ հայ տղան մա՞րդ բնէ, միախամանակ անոր երակներուն ներարկելով հայ ծնած ըլլալու եւ հայ ապրելու պատիւին գիտակցութիւնը։

Եթէ չենք ուզեր որ մեր վարժարաններուն համար ծախս սըւող մեծ գումարներ ի զուր վատնուած ըլլան, եթէ չենք ուզեր մեր գպրոցները մօտ ապագային պարպուած տեսնել իրենց ուսունողութենէն, եթէ կը կարծենք տակալին թէ հայ վարժարանները հոյապահպանման մեր ամենէն ամուր յենարաններն են, պէտք է գտնենք միջոցները եւ ստեղծենք պայմանները՝ կրթութեան այդ վառարանները գարձնելու իրակա՞ն կեդրոններ հայեցի դաստիարակութեան, ուր եռայ հայ կեանքը, ուր սաւառնի հայ ոգին և ուր ապրի, նորահաս մանուկներուն մէջ, հայութիւնը։

Ա. Գ.

ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԹԱՅԱՐԱՆ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ ԵՒ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ  
ՎԵՅ ԿՈՒՍԱԿՐՈՆ ԱԲԵՂԱՆԵՐՈՒ



**Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միարանութիւնը** եւ Հայ համայնքը հրճուանքի ու հոգեկան գոհացումի պահեր ապրեցան 24 եւ 25 Յուլիս, Շաբաթ եւ Կիրակի օրերուն, երբ տեղի ունեցան Ս. Աթոռոյոյ ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջի Հանդէսն ու վեց շրջանաւարտ սարկաւազներու կուսակրօն աբեղայ ձեռնադրութիւնը:

Հայ Եկեղեցիի եւ Հայ ժողովուրդի անսակարկ ծառայութեան նըւկրուող վեց այս նորընծաներուն ձեռնադրութիւնը անգամի մը Համար գարձեալ կու գայ տերող Հայութեան ուշադրութիւնն ու ակնկալութիւնը սեւեռել Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Դպրեվանքին վրայ, որ մօտ մէկուկէս գարու իր Հարուստ կեանքին ընթացքին ազգին տուած է բազմահարիւր կը- րոնականներ, ըլլան անոնք իշխանաւորները մէր Եկեղեցիին, կամ պարզ աշխատողները այս Հաստատութեան:

Բազմահմուտ Եկեղեցականներ կամ աշխարհական ժառանգականներ պատրաստելու այս սրբազն պարտականութիւնը Ս. Յակոբեանց Միարանութիւնն պահանջած է բազում զոհովութիւններ, ըլլան անոնք նիմիական թէ բարոյական: Աշխարհը սասանեցնող երկու Մեծ Պատերազմներու ընթացքին իսկ, ժառանգաւորաց Վարժարանը շարունակած է իր գոյութիւնը պահել չնորհիւ Միարանութեան անյողդողդ կամքին և նպատակաւաց ուղղութեան: Հարկ կա՞յ չէստելու հոռ, թէ արտասահմանի Հայ դադրւթներու կրօնական կեանքը կարելի կը դառնայ, վերջին յիսուն տարիներուն մանաւանդ, չնորհիւ Երուսաղէմի ժառանգաւորացէն իրենց հոգեկան եւ ժառանգական մոռնդը ստացած կրօնականներու, որոնք Լուսաւորչի սուրբ Հաւատքին հետ տարածեած են ու կը տարածեն տակաւին Հայ դարաւոր մշակոյթի սէրն ու Հըֆայքն ալ:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի այդ անգնահատելի դերին խոր գիտակցութեամբ է որ Ս. Աթոռոյոյ Պատրիարք Ն. Ամեն. Տ. Եղիշ Ս. Աթքեպս. Տէշտէրեանի հոգածութեամբ եւ հետամուռ հսկողութեամբ կը կառուցուի Ալէքս եւ Մարի Մանուկեան Դպրեվանքին որը չէնքը, որ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Վուեմ. Նախագահին հոյակապ նուիրատուութեան չնորհիւ պիտի ընձեռէ արդիական լաւագոյն պայմաններ, ուսման եւ դաստիարակութեան:

Ա Մ Ա Վ Ե Ր Զ Ի Հ Ա Ն Դ Է Ս

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջի Հանդէսը տեղի ունեցաւ Ս. Աթոռոյոյ Պալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի սրահին մէջ, Շաբաթ, 24 Յուլիս 1971, երեկոյեան ժամը 5.30ին, Ամենապատիւ Պատ-

րիարք Ս. Հօր նախագահութեամբ եւ ի ներկայութեան Ս. Յակոբեանց Միա-  
բանութեան գերազնորհ ու հոգեշնորհ հայրերու, ժառանգաւորաց եւ Տա-  
տուրեան սաներու, ինչպէս նաև իուռն բազմութեան մը:

“ Հանդէսի սլիդրին, գեղեցկօրին տպուած յայտագիրներուն հետ ներ-  
կաներուն բանուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի ուսանողութեան ընոր  
Սիրո» պարբերաթերթի առաջին թիւը, 48 մեծադիր էջիրով:

Ցունկայս երգուած «Սիրա ի սիրտ» ժառանգաւորաց Վարժարանի  
քայլերթին ետք, Հանդիտութիւնը բացաւ Պրն. Արայ Գալայձեան, որ շնչտեց  
Երաւաղէմի Դպրեվանքին կարեւորութիւնն ու ցարդ ունեցած դերը մեր Ե-  
կեղեցիի եւ ժողովուրդի կեանքին մէջ:



Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը մրցանակ կը յանձնէ ժառանգաւոր սամի մը:

Կրօնական լուրջ եւ խորհրդաւոր մթնոլորտ մը ստեղծեց ժառան-  
գաւոր սաներու կողմէ երգուած «Ընրափի Լեռ» շարականը, ղեկավարութեամբ  
Պրն. Սահակ Գալայձեանի, որմէ ետք բեմ բարձրացաւ շրջանաւարտ Բարե-  
շնորհ Պողոս Սարկաւագ Մանուկեան, Երանաշնորհ Գաթողիկոս  
Յովսէփեանցի մասին բանախօսութիւն մը ընելու: Մօս տաս վայրկեան,  
Բարեշնորհ Սարկաւագը կտրուկ գիծերով ներկայացուց մէծ կրօնականին եւ  
սքանչելի հայրենասէրին կեանքն ու գործունէութիւնը, ծանրանալով մա-  
նաւանդ Յովսէփեանց Կաթողիկոսի ձգած զիտական-բանասիրական ժառան-  
գութեան վրայ:

Օրուան խորհուրդին համապատասխան և կարծէք շրջանաւարտ սար-  
կաւագներուն համար յատկապէս զրուած Բ. Քիփլինկի «Եթի...» քերթուա-  
ծը հասկացողութեամբ արտասանեց ժառանգաւորաց սան Համբարձում Պալ-  
եան, որմէ ետք Քէթլըպի «Պարսկական Շուկայ» սկրուն կտը ըը դաշնակի  
վրայ յաջողութեամբ նուագեց Տիրացու ննովը Զէքիճեան:

- Երջանաւարու Բարեխնորհ Սարդիս Սարկաւագ Պարսամեան պատուած էր բանախօսութիւն մը «Հայ Եկեղեցին և Հայ Եկեղեցականը» պատեհ նիւթին չուրջ, ուր, ընելէ ետք ամփոփ գնաւաստականը տասնհինգ քառ բերու ընթացքին անոնց կատարած գերին, կը հաւատոփացնէր ներկաները թէ իրենց ձեռնադրութեամբ, իրենք վեց եղբայրներ, պիտի ջանային ընթանալ որհնեալ նախնիքներու ուզիղ ծամբէն, ի պարծանս Հայաստանեաց Ս. Եկեղեցիին եւ Հայ ժողովուրդին:

Դանիէլ Վարուժանի «Յան» քերթուածը արտասանեց Ժառանդաբար սան Գրիգոր Աֆարեան, եւ «Օրնեցէք զՏէր» Ս. Աթոռոյն շարականի երա գեցողութենէն ետք, Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ նպա. Աճէմեան թեմ հըս բաւիրեց Ամենապատի Պատրիարք Ս. Հայրը, եւ ներկայացուց 1970-71 ու սումնական շրջանի Ժառանդաբար Վարժարանի եւ Ընծայարանի տարեկան տեղեկագիրը (որ Կերեւի «Սիոն»ի ներկայ թիւին մէջ):

Պատրիարք Ս. Հայրը շրջանաւարտութեան վկայականները յանձնեց, ծափաւարութիւններու ընդմէջն, Ընծայարանի նրբորդ Կարդը աւարտած վեց սաներուն, որոնք են —



Նրբ ծմբադիր կը յառաջանան դեպի Աւագ Խորան :

Բարեխնորհ Վարդան Սարկաւագ Տատուրեան  
Բարեխնորհ Պողոս Սարկաւագ Մանուկեան  
Բարեխնորհ Մանուկ Սարկաւագ Մուրատեան  
Բարեխնորհ Ծննիկ Սարկաւագ Այցագեան  
Բարեխնորհ Սարդիս Սարկաւագ Պարսամեան  
Բարեխնորհ Գարբրիէլ Սարկաւագ Թաշճեան

Ն

Տեղեկագրի աւարտին, Պատրիարք Ս. Հայրը բաժնեց ուսմանց մէջ առաջնութիւն շահող աշխատանքու մրցանակները, եւ լատ տպաւրիչ այս հանդիսութիւնը աւարտեցաւ Ամենապատիւ Նախագահին օրհնութեամբ։

### ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԵՅ ԿՈՒՍԱԿՐՈՆ ԱԲԵՂԱՆԵՐՈՒ

24 և 25 Ծուլիս 1971, Շարաթ և Կիրակի օրերուն, ցնծութեան մէջ էր Սրբոց Յակոբեանց ամբողջ Միաբանութիւնը, որովհետեւ վեց երիտասարդ ու պատրիարքուած շրջանաւարտները Ընծայաբանին կու զային միանալու Սրբատեղեաց պահապան միաբաններու շարքին, ուխտած ըլլալով նրա փրուիլ կուսակցոն քահանայութեան, ի պահառաւթիւն Երուսաղէմի զարւոր Հայ Պատրիարքութեան եւ ի շնութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին։

### ԿՈԶՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐՈՒ

Շարաթ երեկոյ, Ս. Յակոբի Տաճարին մէջ կատարուեցաւ կոշման կարգը նորընծաներուն, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Ս. Հոր։



Հրաժարաւմ աշխարհին ու աշխարհիկ կեամբէն։

Ամենապատիւ Պատրիարքին՝ Կոչեցեաններուն ուղղուած «Օրհնեացէ զմէնէ Տէր ի Միոնէ, այն որո բնակեալն է յԵրազարքման օրհնութենէն» ետք, խարտակիակ Ս. Աթոռոյ Էռաւարարապես Գերք. Տ. Հայրիկ Արքեպո. Առանձնան վկացեց ընծայեաններու Ծոգեկան ևս մասուոր բարեմանութեանց մանէնն զանոնց բարեամին նկատելով քահանայական ձեռնադրութեան։

Արարողութեան աւարտին, վեց երիտասարդ ուխտադիրները արտասանեցին Ս. Գրիգոր Տաթեւացիի կողմէ սահմանուած Հայաստանեայց Ս. Եկեղեցիի գաւանները։

## ՀԵՌՆԱԴԻՐՈՒԹԻՒՆՆ ՆՈՐԸՆՄԱՆԵՐՈՒԻ

Վեց նորընծաներու մեռնադրութիւնը կատարուեցաւ 25 Յուլիս 1971, Վարդապետ Կիրառիկն, ժեռամբ Ամեն։ Պատրիարք Ս. Հօր, որ մատոյց նաև օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը։ Խարտակիակն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Ասլանեան, խոկ առընթերակայ էին Հոգչ. Տ. Տ. Մեւան եւ Աղան Արքղաները։

Առաջնորդուելիք եռք Ս. Խորանին առջեւ, ուր երգուեցան ձեռնադր րութեան շարտկանմները։ Վեց նորընծաները ֆնրադիր եւ առաջնորդութեամբ տարնթերակայ Հոգեհնորհ հայրերուն բարձրացան Ս. Խորան եւ հաւատացւեալ խուռն բազմութեան դառնարով ու իրենց ձեռքերը բարձրացուցած։ Հրաժարակցան աշխարհէն, կաշուելու համար ոք քահանայութիւն Սուրբ Էջմիածնուցուցած զեցւոյ։



Պատրիարք Ս. Հայրը կ'օծէ նակատմերը նորընծաներուն։

Ապա, երբ բոլորուած էին իրենց հոգեւոր ծնողին, Ամեն։ Պատրիարք Ս. Հօր շուրջ, այս վերջինը իր ձեռքերը խաշաձեւ՝ դրաւ իւրաքանչիւր ընծայեալի գլխուն եւ ազօթեց։ «Ես զնեմ զնես ի վերայ սորա եւ դուք ամենեքեան աղօթս արարէք ոք արժանի լինիցի սև պատիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեսան Աստուծոյ»։ Արդէն քիչ առաջ կաղիրները միաձայն թեամբ եւ երիցս «արժանի ենք ձայնած էին»

Եեսոյ, մեղջոյնեէն քիչ առաջ, նորընծաները ծնրադրեցին Ն. Ամենապատուութեան առջեւ եւ յաջորդաբար քնդունեցին քահանայական սեւ փիլոնը, սաղաւարտը, փորուրարը շուրջառը եւայլն։ Ապա, քաջուած վարդոյրին ետին գգեստաւորուեցան, մինչ դպիրներ և նորհուրդ խորինը

կ'երդէին, հաւատքի ու վերացման ամենէն սքանչելի պահ մը ստեղծելով խորհրդաւոր Տաճարին եւ ներկաներու որտերուն մէջ:

### ՕԵՐԻՄ ՆՈՐԸՆԾԱՆՑՈՒՅԹԻ

Կը հասնի ձեռնադրութեան ամրող պաշտօնին ամենէն՝ պակուցիչ մասը, երբ Պատարագիչ Ամեն։ Սրբազնը սրբալոյս միւռնով կ'օժէ իւրաքանչիւր նորընծայի մաքուր ճակատն ու ձեռքերը, եւ կը վերակոչէ զանոնք իրենց նոր անուններով, ըստ Եկեղեցւոյ դարաւոր պովորութեան։ Այս պէս,

Վարդան Սրկ. Տառաւրեան կը վերակոչուի Տ. Թակուր Արեղայ  
Գողոս Սրկ. Մանուկեան կը վերակոչուի Տ. Նուրիեան Արեղայ  
Մանուկ Սրկ. Մուրատեան կը վերակոչուի Տ. Գիսակ Արեղայ  
Օննիկ Սրկ. Ալքազեան կը վերակոչուի Տ. Վիգէն Արեղայ  
Սարգիս Սրկ. Պարսամեան կը վերակոչուի Տ. Խաժակ Արեղայ  
Գարեթէլ Սրկ. Թաշմեան կը վերակոչուի Տ. Մուշեղ Արեղայ



Երբ Խաւատացեալներուն կը շնորհուի առաջին օրինությունը։

Քիչ ետք, Պատրիարք Սրբազն Հօրմէն կը ստանան Սուրբ Սկիւր, նշանակ Ս. Պատարագ Ժատուցաներու իշխանութեան, եւ զառնալով հաւատացեալ բազմութեան, կու տան իրենց առաջին օրհնութիւնը, անդրանիկ խորհրդանիշը իրենց հովուական ապազայ կեանքին ու գործուանչութեան։

«Ողջոյնի պահում, Պատարագիչ Սրբազն Հայրը ԷՌողազուրէ իր Հոգեւոր գաւակները, մինչ իրեն կը հնաւելին Ս. Յակոբեանց Միաբանութեան բոյրը անզամները, սրտազեղ ու երջանիկ։ Ս. Պատարագը այսուհետեւ կը

շարունակուի անընդմէջ, եւ վերթաւորութեան, մինչ վեց նորբնծառներ զասին մէջ գրուած զրակալներու վրայէն Աւետարանի հատուածներ կը քաղցին, հաւատացեաներու բազմութիւնը կու դայ երկիւղածութեամբ աջակամքոյր կատարելու:

### ՎԵՂԱՐԻ ՏՈՒՌԻՉՈՒԹԻՒՆ

Նոյն օր, երեկոյեան ժամերգութեան աւարտին, յասոսկ ազօթքներէ եւ Ս. Գրոց ընթերցումներէ ետք, Ամենապատի Սրբազն Հայրը հանեց իւրաքանչիւր նորբնծայի գլուխէն սարկաւագական ջրունը (գղակ), զայն փոխարինելով կուսակրօն քահանայութեան խորհրդանիշ վեղարով։ Արարողութեան աւարտին, նորբնծաները, իրենց Հոգեւոր Հօր Հետ, առաջնորդուեցան Պատրիարքարան։



Նորբնծայ Արեդաները իրենց Հոգեւոր Հօր՝ Ամեն-Պատրիարք Սրբազնին հետ

### ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Իրիկունը, ժամը 6.30ին, Վանքի սեղանատան մէջ կատարուեցաւ Միաբանական ընթրիք մը, նախադահութեամբ Ամենապատի Պատրիարք Ս. Հօր եւ ի ներկայութեան Ս. Յակոբեանց Միաբանութեան, նորբնծաներուն ու ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայաբանի ուսանողութեան։ Բացման խոսքը կատարեց Դարեկանքի Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ հպու. Աճէմեան, ապա նորբնծաներուն կողմէ խօսք առաւ Հոգէ. Տ. Մուշեղ Արեղայ Թաշճեան։ Խոկ ընթրիքը իր յորդորական եւ չնորհաւորական գեղեցիկ խոսքով փակեց Ամենապատի Ս. Հայրը, որ, «Օրհնեցէք զծէր» Ս. Աթոռոյի շարականի երգեցողութենէն ետք, գրչնէց ներկաներն ու սեղանը։

Ապա, վեց նորրնծայ արեղաները իրենց վարժիչներն էնոդը 8. Նախընկեր Արքայականի առաջնորդութեամբ մէկնեցան Բնեթղէէչմի մէր Վանքը, հօն անցրնելու քառանորեայ իրենց առանձնութեան շրջանը:

«Սիրի», սև ՈՒՐԱԱ ԱՌԻԹՈՎ, ԶԵՐՄԱԳԻՆԸ ԿՅ ՇՆՈՐՀԱՌԱՐԵ  
ՆՈՐԱԾՈՎ ՎԵՅ ԱԲԵՂԱՆԵՐԸ, ԱՐԱՆՑ ՏԱԽԱՆԱԼՈՎ, ԱՄԷՆ ԿԱՐԳԻ ՑԱԶՈՂՈՒԹԻՒՆԻՆ  
ԻՐԵՆՑ ՍՈՒՐԱ ԱՊԱՐԻՉՈՒ ՄԵԶ:

### Կ Ե Ն Ս Ա Գ Բ Ր Ա Կ Ա Ն Ք

Հոգշ. Բակուր Արդ. Տատուրեան

Ծնած է Հալէպ 1948ին, աւազանի անունով Վարդան: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Հայկացեան Վարժարանին մէջ: 1962ին առարտելի ետք Հինգերորդ դասարանը, դիմած է եւ ընդունուած Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարան: Անընդմէջ ուսանողութենէ մը ետք, սարկաւագ ձեռնադրուած է 27 Յուլիս 1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած է Ընծայարանի երրորդ կարգէն:

Հոգշ. Նուրիան Արդ. Մանուկեան

Ծնած է Հալէպ 1948 Յուլիս 22ին: Աւազանի անունով Պօղոս: Նախնական ստուգը ստացած է Հալէպի Հայկացեան Վարժարանը, որուն հինգերորդ դասարանը աւարտելի ետք 1961ին անցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեկանքը: 1966ին դիմած է եւ ընդունուած Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարան: Սարկաւագ ձեռնադրուած է 27 Յուլիս 1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած, աւարտելով Ընծայարանի երրորդ կարգը:

Հոգշ. Գիսակ Արդ. Մուրաստեան

Ծնած է Հալէպ 1951 Նոյեմբեր 6ին, աւազանի անունով Մանուկ: Նախնական ստուգը ստացած է Գամբիլի Ազգային Վարժարանին մէջ, որուն հինգերորդ դասարանը աւարտած է 1963ին: Նոյն տարին դիմած եւ ընդունուած է Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարան: Սարկաւագ ձեռնադրուած է 27 Յուլիս 1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած, աւարտելով Ընծայարանի երրորդ կարգը:

Հոգշ. Վիգէն Արդ. Այգազեան

Ծնած է Սղերդի Շերնաք գիւղը 1950 Յունուար 21ին, աւազանի անունով Օչնիկ: Նախնական կրթութիւնը տեղւոյն վրայ սոսանալիք ետք Պոլիս եկած է եւ յաճախած Ս. Անձ Դպրեկանք, որուն միջնակարգ շրջանը աւարտած է յաջողութեամբ: 1967 Հոկտեմբերին եղած է Երրուազէմ եւ եղած Ընծայարանի առաջին կարգի ուսանող: Սարկաւագ ձեռնադրուած է 27 Յուլիս 1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած:

### Հոգ2. Խաժակ Արդ. Պարսամեան

Մնած է Արարկիր 9 Յունիս 1951ին, աւազանի անունով Սարգիս:  
Քիչ ետք ծնողքին հետ բնակութիւն հաստատած է Պոլիս, ուր իր նախնական  
ուսումը ստացած է Սուբր Մերոպեան Վարժարանին մէջ: Ապա հետեւած է  
Ս. Խաչ Դպրեվանքի դասընթացքներուն եւ դպրութեան աստիճան ստացած  
1967ին: Նոյն տարեցրջանի Հոկտեմբերին գիմած է եւ ընդունուած Ս. Աթո-  
ռոյս Ժառանգաւորաց Վարժարան: Սարկաւագ ձեռնադրուած է 27 Յուլիս  
1968ին, իսկ շրջանաւարտ եղած ներկայ տարւոյ Յունիս 15ին:

### Հոգ2. Մուշեղ Արդ. Թաշմեան

Մնած է Գէյրութ 1947ին, աւազանի անունով Գաբրիէլ: Իր ուսումը  
ստացած է նախ Ս. Ժառանգաւորաց Մանկանց Վարժարանը եւ ապա կենաց Վար-  
ժարանը: 1960ին եկած է Երուսաղէմ, ուր աշակերտած է մինչեւ 1965, երբ  
անձնական պատճառներով վերադարձած է Գէյրութ: 1970ին վերստին ըն-  
դունուելով, սարկաւագ ձեռնադրուած է 1970 Սեպտեմբերին, իսկ ներկայ  
տարեցրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած է Ընծայարանի բաժնէն:

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒԽՆ ՏԵԱՐՆ

Ըմբ ի լերին այլակերպեալ ցաւցեր զառաւածային  
և գորաւթիւնն»

(Շարական)

Այս բառերով մեր Հայրերէն մին դովըը  
հիւսած է մեր Տէրող ու Փրկչին՝ Յիսուս  
Քրիստոսի լուսափայլ այլակերպութեան հը-  
րաշալի գրուագին։ այլակերպութեան, որ  
Հայաստաննեայց եկեղեցւոյ գլխաւոր հինգ  
տաղաւարներէն մէկն է, լոյսի հանդէսը եւ  
լուսափայլ տօնը։

Քրիստոսի այլակերպութիւնը տեղի ու-  
նեցաւ իր քարոզութեան երրորդ տարուան  
ամառը, Յարութենէն բառասուն օրեր ու-  
սաջ։

Յիսուս տարիներէ ի վեր կը քարոզէր  
ու հրաշներ կը գործէր Պաղեստինի մէջ։  
զանազան կարծիքներ կային իր ինքնու-  
թեան, իր ո՛վ ըլլալուն մասին։ Շատերու  
համար Ան Ցովհաննէս Մկրտիչն էր, ուրիշ-  
ներու համար՝ Եղիան կամ ուրիշ մարգարէ  
մը, իսկ զիչ պարագաներու միայն խոստո-  
ւանուած որպէս սպառուած եւ ակնկալուած  
Փրկիչն ու Մեսիան։


Ուրիշներու նման, առաքեաներ ալ մին-  
չեւ որոշ շրջան մը Յիսուսը կ'ընդունէին  
որպէս Փրկիչ՝ որ պիտի զար Խօրայէլի ժո-  
ղովուրդը գերութեան ծանր լուծէն պատե-  
լու եւ Դաւթի Աթոռը վերահստատելու։  
Բայց այլակերպութեամբ Ան եկաւ ապա-  
ցուցանել թէ Ինք եկած էր համայն մարդ-  
կութեան մեղքերուն համար չարչարուելու,  
նախատուելու, խաչուելու, թաղուելու եւ  
երրորդ օրը փառաւորապէս մեռեներու մէ-  
ջէն յարութիւն առնելու։

Այլակերպութեան գրուագը հաւասարա-  
պէս կը գտնենք համատես Աւետարաններու  
մէջ, փոքր տարբերակներով։

Ինչպէս կը պատմեն աւետարանիչները,  
Յիսուս իր հետ առնելով սիրելի երեք տշա-  
կերտները՝ Գետրոսը, Յովհաննէսը եւ Յա-  
կոբոսը, բարձր եւ առանձին լեռ մը բարձ-  
րացաւ աղօթելու համար։ Հոն երբ առանձ-  
նացած աղօթք կը մատուցանէր իր Հօր,  
լուսաւոր ու փառաւոր կերպարանքով, իր  
ասուուածային գօրութեամբ երեւցաւ աշ-  
կերտներւն։ անոնց կենդանի աչքերուն առ-  
ջեւ պատահեցաւ այլակերպութիւնը Գալիլ-  
իոյ Սուրբ Կոչուած լերան վրայ, որ ըստ  
աւանդութեան Թարոր լեն է։

Քրիստոսի այս փառաւոր ու լուսաւոր եւ-  
րեւոյթին մէջ կու գան իրեն միանալու ու  
իր ապագայ գործունէութեան մասին իր  
հետ խօսելու Հին Կատարանի երկու տի-  
տանները՝ Մովսէս եւ Եղիա։ Առաքեանե-  
րու վայրանքին արտայայտութիւնն է Գետ-  
րոսի առաջարկը՝ երեք տաղաւարներ պատ-  
րասիլու մասին, որուն կը յաջորդէ ամպը  
որ կայ հովանի ըլլալու երկնային այս  
տեսանին։ ապա կը յաջորդէ երկնային  
ձայնը որ կը վկայէ. «Դա է որդի իմ սիրե-  
մի ընդ որ հանեցայ, զմտ լուարուք»  
(Մատթ. Ճէ 5)։

Երբ լեռնէն Կիջնէին, Յիսուս պատուի-  
րեց ուրիշներու շպատմել ու ծածուկ պա-



հել տեսիլը, մինչեւ որ «Մարդու Որդին» մեռեներէն յարութիւն առնէր:

Ահա ամփոփ ու սեղմ նկարագրութիւնը Քրիստոսի երկրաւոր կեանքի փառքերէն միոյն, ուր Անոր աստուծային զօրութիւն նը կ'ապացուցուի եւ Ծրինաւոր՝ Հայրը կուե՛՛ մէջ մնաց իրեն՝ փանակուր յիշատակ մը անց- դալ պանծալի փառքերէն: Տարիները չկըր- ցան անոր վրայ մոռացութեան տիուր քող գէկ ու իր վեհութենէն բան մը պակսեցը- նել:

\* \* \*

Ա. Եթէս առջ Խոչով Հետեւինք մեր՝ Տիրոջ Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքին, պիտի նկատենք իր կեանքի մեծագոյն ու զիմասոր զբուազները ապացաւ լիներու մրայ, սիրեց բարձրանալ, եւել բարձուաք- ներ, հեռու մարդկային կեանքի մեղքերէն եւ աղջուկներէն, առանձին հաղորդակցելու իր երկնաւոր Հօր հետ:

Քրիստոս բարձրացաւ Թարոր լեռը, Սուրբ լեռը, իր փառքի ու փառաւորութեան լեռք, ուր եկան իրեն միանալու Հին Կոտա- կարանի զիմասոր երկու ներկայացուցիչնե- րը՝ Մովսէս եւ Եղիած առաջնին՝ նախան- ձայոյց օքէնսդիրը, երկրորդը՝ նախանձա- խնդիր օրինապահը: Մովսէս եւ Եղիած Հին Ուխտի ներկայացուցիչները, կու գան վը- կայել Նոր Ռւկատի ներկայացուցչին՝ Քը- րիստոսի ու Անոր ճշմարիտ ու լոյս վարդա- պետութեան համար:

Ահա այս գեղեցիկ ու տպաւորիչ տեսի- լէն ետք էր որ, առաքեալներուն համար հասկնալի զարձաւ Մեսիայի ճշմարիտ ըմբ- րուումը՝ որ խտացուած էր Քրիստոսի ու Անոր վարդապետութեան մէջ: Անոնք տե- սան գալիք շարչարանքն ու յաջորդող լու- սաւոր ճամբան: Թէեւ իրենց համար շատ գժուար եւ դառն էր Գեթսեմանիի ձորէն մինչեւ Գողգոթայի բարձունք վերելքը, սա- կան Թարորը առաքեալներու գիտակցու- թեան քերատ անցաւոր ցաւերէն անդին յա- փուենական կեանքի մը զոյութիւնը:

Թարորի վրայ տեղի ունեցած այլակեր-

րոպէներուն մէջ Թարոր լերան վրայ տեղի ունեցած այլակերպութեան այս հրաշալի դէպքը կարեւոր հանդուութիւն մէջ էր կազմէ: Քրիակործութեան այնքան խորհրդաւոր ճամբուն վրայ: Թարորը Պետրոսի մտքին մամբ մնաց իրեն՝ փանակուր յիշատակ մը անց- եալի պանծալի փառքերէն: Տարիները չկըր- ցան անոր վրայ մոռացութեան տիուր քող գէկ ու իր վեհութենէն բան մը պակսեցը- նել:

\* \* \*

Այլակերպութեան տօնը որշափ կրօնա- կան՝ նոյնչափ ալ աշխարհիկ տարազ եւ իր մասս ունի մեղի համարձ կապուած ըլլալով մեր հին հեթանոսական, տօներէն, գիշաւու- րին՝ Վարդավառին հետ, որով եւ կը կոշ- ուի շատերու կողմէ:

Վարդավառը հեթանոսական շրջանի մեր մէծագոյն տօնն ու տօնախմբութիւնն էր, տարեսկիզբը, ուրախաւութեան տօնը, ցնծու- թեան ժամը:

Գրիգոր Լուսաւորչի մէկ գեղեցիկ կար- գագրութեամբ Այլակերպութեան տօնը մի- ացուած է Վարդավառին: Լուսաւորիչ սիրած է պահէլ Հայկական հին տօները, զա- նոնք միացնելով քրիստոնէական տօներուն, հաշտեցնելով հինը նորին հետ, պանծացը- ներոյ նորը ու մտքերու մէջ վառ պահելով հինին յիշատակը:

Ամէն որ իր կեանքին մէջ պէտք ունի այլակերպութեան, եւ պայծառակերպու- թեան վսեմ դաշտավարին ու տեսիլքին, իր Թարորին.

Թարորը՝ որ կեանքի փորձա- քարն է, հաւատքի զէմն ու լեռը: Զո՞ն ա- պաքայներ, եկան իրենց հաւատքը զօրացը- նելու, ամրապնդելու, եւ աւելին՝ պայծա- ռակերպութելու: Կոյնալի մենք ալ ամրա- պնդուած ու, զօրացած հաւատքով բարձրա- նանք Թարորի բարձունքը, հաւատքի զօ- րութեամբ, ունենալու, մեր կեանքի պայծա- ռակերպութիւնն ու այլակերպութիւնը: Ու- նենանք մեր բարձունքը՝ Սուրբ լեռը՝ ինչ- պէս կը սիրէ կոսէլ Թարորը Յովհաննէս առ- պաքայլ, որպէսդի կարենանք անկէ հաղոր- դակցիլ մեր երկնաւոր Հօր հետ, հեռու՝

կեանքէն ու կեանքի հաշիւներէն։ Այդ լեռը բարձրանալը զժուար է։ Ինչպէս Մովսէս մերկացաւ, իր անսուրբ ոտնամաններէն Սիւնա լեռ բարձրանալու ատեն, այնպէս ալ անհրաժեշտ է որ մերկանանք մեր մեղքերէն, որպէսզի կարենանք մաքրուած ու սրբուած մօտենով մեր Սուրբ յերան ու սրբութիւններուն։

Այլակերպութիւնը կրնանք Գողգոթայի շարունակութիւնը նկատել։ Գողգոթայով մարդ կը չարշարուի ու Թարորով կ'այլակերպուի։ Թարորը վերջն է Գողգոթայի

չարչարանքներուն, երկրաւոր կեանքին, ու սկիզբը՝ երկնաւոր կեանքին։ Թարորը երկնաւոր կեանքի առաջին հանգրուանն է, առաջին սանդիսամատը։

Թրիստոս Գողգոթայի իր խաչով սանդուի մը Հիմնած, զետեղած եղաւ դէպի Թարոր անոնց համար՝ որոնք իրապէս կ'ուզեն բարձրանալ։

Քալենք մեր Տիրոջ Յիսուս Թրիստոսի բացած նեղ ու զժուարին ճամբէն, հասնելու պայծառ ու փառաւոր ուղիին, մեր կեանքի Թարորին։

**ԱՂԱՆ ԱԲԴ. ՊԱԼԻՇԶԵԱՆ**

## ԳՐԱԿԱՆ

# ՓԵՌ-ՄՆՁԵՎ ԵՒ ՈԼԻՄՊԻԾ

ՈՎՐԵՐԴՈՒԹԻՒՆ ՀԵՆԴ ԵՐԵՄՈՒՅԾ  
ՅՕՐԻՆԵԱՑ  
ԼՇՄՄԵՆՈՒԵԼ, ԵՍԵՑԵԱՅ

### ՀԱՆԴԵՍԻ

Տեսարանն է արքունի պալատան սենեակներէն մին

### ՏԵՍԻԼԱ

ՈՒԽՄՊԻԾ և երկու նաժիշտ

ՈՒԽՄՊԻԾ. Որո՞ւ մտքէն կ'անցնէր. պիտի թողում եղեր զեեզ, ափո՛ւնք Բիւզանդեան, Հարս գալու համար հիւսիսականաց վեհագունին արքունիւքը : Ինչպէս եղաբարք աշխարհէն տեարք, ես ալ վերջապէս թագուհի եւզայ Հայոց աշխարհէն : Նոր երկիր, նոր աշխարհք, նոր կարգ և օրէնք՝ կը զգամ նոր ալ պարտքեր կը գնեն իր վրաս. գեռածաղիկ օրիորդի մը թեթեւ մտածումները պէտք է որ այլեւս մէկդի թողում, եւ ես ալ ըստ կարի աշխարհէն օգուտը խորհիմ, որում կ'չեցայ ի Տիկնութիւն : Կը տեսնեմ որ զուր տեղը Բիւզանդեան արքունեաց մէջ բարբարոս կը կոչէին այս ազգը. այդ անտեղի հպարտութիւն մէ, իրենցմէ զուրս զամէնքը խժական անուամբ յորջործէն . վասնդի բաղդատամամբ մեր ընդարձակ կայսրութեան՝ թէեւ փոքրիկ ազգ, այլ համեմատարար տուաքինի եւ հանճարեղ անձինք եւ քաջ օգրավարք պակաս չեն իւր մէջ :

Տեսայ ես ներսէն մը որ մեր հայրապետաց ընտրելազոյններէն վար չի մնար, եւ ինչպիսի՛ խրոխտ արիական դէմք Վասակայ վրայ՝ երբ իւր աննման կորիւներովը սպարապետի գուռն կու գար : Նոյնիսկ Անդովկ որ իմ հակառակորդիս հայրն է, ինչպիսի՛ անվեհեր կերպարանք. եթէ բան մը կը պակսի այս ազգին, որչափ որ կրցի նշմարել՝ սերու միութիւն մէջներին եւ վեհազոյն պետ մը զանոնք միացնող ..

Ի՞նչ գեղեցիկ ասպարէղ քու առջեւդ, Ոլոմպիս, ահա քեզի պըսակ փառաց մը առձենն պատրաստ՝ արդեամբ եւ յիրաւի նախանձելի ըլլալու բոլոր աշխարհի : Օ՞ն, անյապազ զրեմ իրենց, յայտնեմ սրտիս իդը եւ փափաքը, խնդրեմ իրենցմէ որպէսսի մեզի օգնութիւն փութացնեն ժամ առաջ խորտակելու մեզ սպառնացող թշնամին. այր'.... (Կ'անցնի գրատեղանի մը դիմաց եւ կը սկսի գրել. Ֆիշ ետք Արշակ վրայ կը հասնի) :

## Տ Ե Ս Ի Լ Ւ

ՆՈՅՆ ԽԵ ԱՐԵԱԿ

ԱՐԵԱԿ. Ի՞նչ կը գրես, Ոլոմպի, նամա՞կ մը սիրելույդ։  
ՈԼԻՄՊԻԱ. Ու թէ մէկ, այլ երկուց. նամակ մը Վաղիսի + նամակ մ'ալ Վաղեն-  
տի՞ իմ սիրելոյր համար եւ այսուհետեւ յաւէտ ինձ սիրելի Հայոց աշ-  
խարհին։ Տե՛ս։

ԱՐԵԱԿ. Այսքա՞ն շուտով դռու սիրեցիր մեր Հայոց աշխարհը, եւ առկայն ի՞նչ  
վիճակի մէջ կը տեսնես զայն Ոլոմպիս։ Ճ այն ինչ որ նախահարցս  
մեծին Տրդասաց եւ Խորովի օրովը։

ՈԼԻՄՊԻԱ. Այսաւասար թշնամույն դէմ այսուն երկար ժաքանելիք փառք եւ  
պարծանք է ձեզի - աշխարհածանօթ են ձեր կրած ցաւերն ու հաղածանք.  
այսուհետեւ պիտի ջանամ եւ աշ ամոքել զայնու Տա՞ր երկին որ իմ  
միջնորդութեամբ Հեթանոսաց զօրութիւնը յաէւս տապալէր եւ քը-  
րիստոնեայ Հայաստանը կրտսապաշտ Պարսկին ձեռքէն ի սպառ ազա-  
տէր։

ԱՐԵԱԿ. Օրհնեա ըկսա Ոլոմպիս, հաղիս թէ Հայութեան ծոցը եկած՝ Հայուն  
ոգուտը կը հորհիս, ամօթ եւ նախատինք մեզի - , Որքա՞փ պիտի սիրէ  
դքեզ ճշմարիս Հայութիւնը՝ թիէ ճանչնայ դքեզ լիովին։

ՈԼԻՄՊԻԱ. Գուն ճանչցե՞ր էիր զիս եւ սիրեցիր, Տէր իմ Արշակ։

ԱՐԵԱԿ. Ճշմարիսն ըսկով, Ուլոմպիս, ես իմ բաղդէս ամենեւին դանդառելու  
տեղիք չունիմ, ինքնինքս միայն գեղուն եմ։

ՈԼԻՄՊԻԱ. Ինչո՞ւ, Տէր իմ։

ԱՐԵԱԿ. Ա՛Հ, Ուլոմպի, կը ճանչնամ, կ'որոշեմ զամն յամենայնի՝ բայց չգե-  
տեմ ի՞նչ անիծեալ ոգի մէ որ դէպի շարի զիս կը մղէ։

ՈԼԻՄՊԻԱ. Ես պիտի ըլլամ գու բարի հրեշտակդ եւ պիտի տեսնես որ քոյդ Ո-  
լոմպի պիտի յաջողի դքեզ ի բարին առաջնորդէլ՝ եթէ իրեն արուած է  
վայելել ընդ երկար ի բոյդ արեւ։

ԱՐԵԱԿ. Ինչպիսի ուժ եւ զօրութիւն կ'աղցես ինձ, իմ սիրաշունչ Ոլոմպիս։  
Միթէ Հայութեացն երկինք ինձի հետ եւ հրեշտակ խազաղութեան ըղ-  
թեզ ինձի դրկեցին. գու սրսարուխ խօսքերէդ շարժեալ ահա կ'երթամ  
ես հոգալ զպէտ աշխարհին. այդ գու անուշ եւ սիրայրդոր նայուած-  
քըդ՝ պահու մի ըներ վրայէս, մի գուցէ ... Բայց ս' ... մետս բար-  
եալ (Կերթքայ)։

ՈԼԻՄՊԻԱ. Երթառ բարեաւ, Տէր իմ Արշակ, ոէ՛ր իմ Արշակ. իւր գեղեցիկ դի-  
տաւորութենէն մի կասեցնէք զինք, ո՞վ երկինք։

## Տ Ե Ս Ի Լ Ւ

ՆՈՅՆ ԽԵ ՀԵԼԵՆԵ

ՈԼԻՄՊԻԱ. Հելենէ, ուստի՞ զառ ե'կ, մտերիմս, Ակ Հաղորդեմ քեզի յոյսե-  
րս, պատմեմ քեզի օրոխս սիրը անպատճեմ։ Բայց ինչո՞ւ այսպէս  
ախուր, իմս Հելենէ։

ՀԵԼԵՆԵ. Ա՛Հ, սիրեցեալդ իմ Տիրուհիս, պիտիս որչա՞փ դքեզ կը սիրեմ, քեզի  
համար կը գոզամ։

ՈԼԻՄՊԻԱ. Ինչո՞ւ կը գոզամ, պախնալու բ՞նչ կայ։

ՀԵԼԵՆԵ. ԱՇ, քու սիրտդ սէր կը կաթէ, և ուր սէր՝ անդ վատահութիւն։ Ինչ-  
պէ՛ս կրնաս մտքէդ անցրնել վտանգ մը հոն ուր հոգիդ կու տաս ար-  
դէն։ ա՛հ, չգիտեմ, ևս չկրցի սիրել Հայաստանը։

ՈԼԻՄՊԻԱ. Ես կը պաշտեմ զայն, Հելենէ։

ՀԵԼԵՆԵ. Ես հոն ցաւեր լոկ կը տեսնեմ եւ վտանգներ քեզի համար։

ՈԼԻՄՊԻԱ. Ես ինձի փառք կը նշարեմ։ Դու կասկածոս ես յոյժ, Հելենէ։

ՀԵԼԵՆԵ. Եւ գու, սէ՛րդ իմ, կարի անքոյթ եւ անկասկած։ ատ' երկինք իմ  
կասկածներ յօդ ցնդէին։

ՈԼԻՄՊԻԱ. Կասկածանք ապրելին լաւագոյն չէ՞ նոյնիսկ մեռնին։ ա՛հ, բիւր  
անգամ։ Սակայն տեսնենք նոր ի՞նչ ունիս, ի՞նչ իմացար։

ՀԵԼԵՆԵ. Որոշ ոչինչ Տիրուհիդ իմ, բայց ինչ որ արդէն կասկածէի եւ առ այն  
պէտք եղած զգուշութիւնները կ'ընէի՛ ա՛լ աւելի նոյն մտաց մէջ հաս-  
տառուեցայ։ Լսեցի եւ այդ որոշ աղրիւրէ, որ մտադիք է Փառանձեմ  
գքեզ ի մաս մասնել որով եւ է հնարիւք, եւ այս առաւու մասնաւոր  
կը բանակցէր քեզի համար իւր հօրը Անդուիկայ հետ։ Ա՛հ, նազերի՛դ  
իմ, զգուշացի՛ր, կ'աղաւեմ, կը պաղատիմ։

ՈԼԻՄՊԻԱ. Եղո՞ւկ ինձ... Սակայն ի՞նչ կը վախսս, անուշ աղջիկ։ եթէ Ասո-  
ուած ինձի պարգեւած է վայելի կեանքը, զուր կը ճգնին հակառա-  
կորդք իմ արեւա կարճեցնել։ իսկ եթէ ոչ՝ ինչ ալ մնեմ անօգուտ է։  
Փութա՛ դու, իմ նամակներու հասցու Վաղէսի և Վաղենտի։ եթէ մեռ-  
նիմ ալ՝ գէթ առաջին եւ վերջին զբաւականա ըլլայ այդ իմ սիրոյն  
առ Հայաստան։ Յետոյ սպասէ ինձի իմ առանձին յարկացս մէջ (Հե-  
լենէ կ'նրբայ)։ Երթամ ես ալ ուր որ անկ է՝ վտանգին տուաջրն առ-  
նելու (Կը մեկնի)։

### Տ Ե Ս Ի Լ Դ

ՎԱՍԱԿ Խ ԱՆԴԱՎԱԿ

Տեսարանին միւր կազմեն ներս կը մտնեն

ՎԱՍԱԿ. Մեկնեցաւ Ոլոմպիս, Սիւնեաց Տէր։ Հոս կրնամք շարունակել մեր  
խօսակցութիւնը։

ԱՆԴԱՎԱԿ. Սպարապե՛տք վասակ, չէ՞ս տեսներ երկրիս վեճակը, որպիսի՛ գա-  
հազէժ ընթացք։ Եթէ քի՛ մ'ալ աշակէն շարունակէ՛ կարծեմ Արքակ  
բոլորովին առանձին պիտի մնայ, եւ ոչ իսկ զո՞ւ պիտի ուզես հաւա-  
տարիմ մնալ այնպիսի տիրոջ մը որ միմիսյն իւր կրցը գերի՛ աշ-  
խարհիս օգուտը բնաւ չի մտածեր, վասնի ապահով եմ թագաւորէդ  
աւելի կը սիրես Հայրենիքդ ։

ՎԱՍԱԿ. Անտարակոյս, Սիւնեաց Տէր։ Մանր է ինձ արդարեւ Հայրենեաց ցա-  
ւերը տեսնել յարաժամ։ իւր ոչ իսկ գեղածիծաղ արեւը որ կ'ողողէ Հայ-  
րենի գաշտերը՝ կը զուարթացնէ իմ սիրոս։ Երբ աչքիս առջեւ կը բե-  
րեմ մաներումն Հայաստանը ոտանիքին ի թշնամենաց, ի իշխանք եւ մե-  
տածածէնք ամրացած բերդերը, եւ ժողովուրդք մասնեալ ի սուր եւ  
գերութիւն, եւ զմտաւ ածեմ գալիք այնչափ պայտականէ անփուսափե-  
լի Հետեւանք անիշխանութեան, կարծես, թէ ճայն մը այդ երկրիս իոդ-  
րումնէն ինձի գէմ կը բողոքէ ու զիս կը կոչէ և կեցի՛ր, Վասակ, ո՞ւր  
կ'երթաս, որո՞ւ կը թողնւած գէզ, եւ անսպաշապան ժողովուրդը»։

ԱՆԴՈՎԿ. Միթէ շթողո՞ւց զայն ներսէս, այրն Աստուծոյ, եւ չառառ քալե՞ց բանակէն:

ՎԱՍԱԿ. Ներսէս քահանայ մ'է Աստուծոյ, փիլոն, վեղար կը կրէ, իսկ մեք՝ զէնք ու դրան. նա հեռաւանց ալ խորանաց առջեւ կրնայ աղօթել հայրենաց համար, իսկ զմեղ մեր պարաքը կը կոչէ Հայոց թագաւորին քով, կամ սահմանագույն՝ զէն ի ձեռին դիմագրաւ ի գումարու մահու, ի պահանջել հարկին: Թ'չ, Սիհնաց Տէր, այս չարաշուք ժամանակին մէջ յորութ կարգ եւ կանոն վրդովեալ, չարիքն անսպասուհաս եւ առաջինութիւն նուազեալ, մի դուցէ պատզայից մեղադրանաց արժանի պարաւելի անուններ ձգեմք պատմութեան մէջ:

ԱՆԴՈՎԿ. Ներսէս սոսկ քահանայ մը չէր, նա հայր էր աշխարհիս եւ իրեն խորհուրդները մեծ կլիք ունէին տէրութեան դործոց մէջ հատմայն: Այսպէս տաղտկացած եւ ճարահատած՝ վերջապէս թողուց մէկնեցաւ: Միթէ դարձեալ միեւնոյն պաշտելի ներսէսը չէ՞:

ՎԱՍԱԿ. Այո՛, իբաւունք ունիս, բայց երբ նախարարը գնացին զանդատելու առ նա ըսելով: «Այս երեսուն տարի է որ Արշակ կը թագաւորէ եւ ոչ մէկ տարի մը հանգիստ թողուց մեղ. չի կրցանք ի բաց ձգել ամեննեխն մեր սուրբն ու նիղակ: Բաւէ է ալ, եթէ կ'ուղէ՛ ինքնին թող շարումակէ պատերազմը իւր աներոց Անդովկայ իշխանին եւ Վասակայ սպարապետին հետ», ի՞նչ պատասխան տուաւ. -Համաստարիմ մնալ իրենց արքային, շմասնել մեր երկիրը անհաւատից: Կը տեսնե՞ս, մեծ իշխանդ Անդովկէ, գմեղ իրենց օրինակ հանգիստացուց. ուստի պէտք չէ որ մենք նոցա հետեւիմք, այլ նոքա՞ մեզ:

ԱՆԴՈՎԿ. Այո՛, ես ալ մտադիր էի քեզի հետ, սպարապետդ Վասակ, անբաժան կալ եւ մնալ ընդ Արշակայ արքայի, բայց գիտես ինչպէ՞ս ի խոր խոցեց իմ սիրոս:

ՎԱՍԱԿ. Գրտեմ զայդ, մեծ իշխանդ Անդովկէ, սիմարեցաւ մեծապէս: Բայց պէտք չէ որ ասելութիւնը առ Արշակ աղիտարեր ըլլայ նաեւ հայրենացդ: Եթէ կարելի է մեք մեղէն, նաեւ բռնի իսկ իրեն պարտուց զգացումը արթնցնեմք իւր սրտին մէջ, եւ ոչ թէ մեք պարտազանց զըստնեմք:

ԱՆԴՈՎԿ. Բայց ի՞նչ կրնամք ընել մեք առանձին:

ՎԱՍԱԿ. Կը մեռնիմք... բայց չեմք թողուր զնա առանձին:

ԱՆԴՈՎԿ. Ա՛ս, քաջդ Վասակ, որոշած էի հաստատապէս քաշուիլ իմ Սիհնեց լեռները եւ յամուր մայրին Արցախոյ, եւ թողուր զինքն ի պատիմ իւր արհամարհանաց, բայց...

ՎԱՍԱԿ. Մեծառդի՛ իշխանդ Անդովկէ, գիտեմ աղիուական զգացմանց խուլ չի կրնար ըլլալ ըսու սիրոտ:

ԱՆԴՈՎԿ. Սակայն դու, ո՞վ քաջ, մեծամեծս կոտորես՝ վասնգի նա շթողուց եւ չանպատուեց զըստ գուստորդ Փառանձեմ:

ՎԱՍԱԿ. Անդո՞վկէ իշխան, ներք ըսեմ եւ իմ զուստրդ Փառանձեմ, խանդակաթ հարսն Գնէլին: Բայց ահա ինքը:

### Տ Ե Ս Ի Լ Ե

ՆՈՅՆԻ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

ՎԱՍԱԿ. Բարենշան է դալուստոց անշուշոց, Տիկին Փառանձեմ, Հայոց թագուհի:

**ՓԱՌԱՆՉԵՄ.** Գեմ ես ալ Հայոց թագուհի, իշխանդ Մամիկոնից. իմ ժամանակու անցաւ, արժանաւորազունին տրուեցաւ այդ պատիւ։ Արշակայ համար չկայ ինչ սուրբ եւ հաստատուն, եւ ոչ իսկ ամուսնութեան անխղելի կատ. ո՛չ արժանիք նու կը ճանչնայ եւ ոչ արդինք կը գնահատէ : Օր մ'ալ կու զայ անջուշ զբեզ ալ երեսէ կը ձեռ, սպարապետ ամենայն Հայոց, քաջ Պատակ :

**ՎԱՍԱԿ.** Ե՛ս, բաւական է որ Աստուած մեզ երեսէ չձեռ :

**ՓԱՌԱՆՉԵՄ.** Դու միշտ իմ Գնիլիս յարդած ու պաշտած գօրավարն ես Հայոց աշխարհին. եթէ սովորեցայ ես զբեզ յարդել եւ սիրել, բայց ոչ եւս է Գնիլ. մեռուցին զայն, բանարսրեցին իւր այրին, եւ արդ կ'անպատօւն :

**ԱՆԴՐՎԿ.** Եւ կ'ուրես որ, սպարապե՛տդ Հայոց, անպատուհա՞ն մնան տակաւին։ **ՎԱՍԱԿ.** Թագաւորաց պատուհասիչը Աստուած է, շըլլանք մեք տիրադրուժ եւ տիրանինք : Խսկ դո՛ւ, Տիկին, գիտցի՛ր զայդ անխար, դու միշտ ես եւ պիտի ըլլաս Հայոց թագուհի. Հայոց աշխարհն առ հասարակ զբեղ միայն կը ճանչնայ, միայն թէ իննայիշ՝ մեր Հայրենեաց :

**ՓԱՌԱՆՉԵՄ.** Վստահ լե՛ր, Հայրակորովդ իմ Վասակ, դու ռւսուցիր ինձ սիրել Հայրենիքը, կը սիրեմ ես զնա բոլորով սրտիւ, ինչպէս կը սիրեմ իմ Հայրս եւ զբեզ : Բայց ի վեր քան զամենայն կը սիրեմ իմ պատիւ :

**ՎԱՍԱԿ.** Միայն թէ զայն չարատաւորեն : **ՓԱՌԱՆՉԵՄ.** Վասն հայրենեաց վատահ լե՛ր, այսշափ միայն կրնամ ըսել : Երթանք, Հայր իմ, քու զուսուրդ Փառանձեմ քեզի կարեւոր ըսելիք ունի :

## Տ Ե Ս Ի Լ Զ

ՎԱՍԱԿ առանձին

**ՎԱՍԱԿ.** Կը յարգեմ ես զԾիկին Փառանձեմ, բայց վախս՝ մի գուցէ վրէժինդ— բութեան ոգին մոլորեցնէ զինքը... Սակայն վասն հայրենեաց վատահացոյց զիս... Անշուշտ Անդովկ զմեզ չի թողուր, եւ այդ շատ է :

Գ. Ա. Բ. Ա. Գ. Ա. Յ. Բ

## Հ Ա Ն Դ Է Ս . Գ

Արքունական ասպարանից մեծ դահլիճը

Տ Ե Ս Ի Լ Ա

ԱՐՃԱԿ և ՎԱՍԱԿ

**ԱՐՃԱԿ.** Սպարապե՛տդ իմ Վասակ, ի՞նչ լուր կը բերես ինձ բանակին. մօսալուս մեծ հանդէսը սպառազինաց թուի թէ կը պաշարէ քու միտքդ : Բայց երբէք զբեզ այսքան մտախոհ չեմ տեսած, եւ ոչ իսկ պատերազմաց միտրին մէջ :

**ՎԱՍԱԿ.** Տէ՛ր իմ արքայ, պատերազմի գալութ ինքնին հաճոյք մ'է զօրավարին, երբ կարդ ու կանոն կը տիրէ բանակին մէջ : Խսկ երբ այդ կը պակսի՝

յայնժամ կը դադրի հաճոյք մը լինելէ՝ նամանաւանդ անցեալ յաջուղութիւնները մոռցնել տալս վախը, եւ փառաց ու յաղթութեանց մէջ արեւորեալ ճակատ մը պարտութեան նախասանօթ ի գերեզման իջեցը նելու վտանգը՝ կը տափառապէն ծեր մարդիկը։ Այս երեսուն տարի է որ Հայոց աշխարհ իւր զաւկըները իմ հրամանացս ներքեւ սահմանագլուխ դրկեց ։ Շատեր անկան փառաց վասն Հայրենեաց, իսկ մնացեալք գոնէ յաղթական գափնիներով ետ դարձան։ Բայց տակաւ տո տակաւ կը սկսիմ նշմարել ժօտալուս պարտութեան մը նախընթաց նշանները։ Եւ ոչ թէ մահուաւ հրաւէրը զոր ուշ կամ կանուխ պիտի ընդունինք վյա կը դառնացնէ՝ այլ անպարտելի անձննա արատաւորելու երկիւզը։

ԱՐԾԱԿ. Եւ Ք'նչ է. պատճառը

ՎԱՍԱԿ. Պատճառը կ'ուզն՞ս հասկնալ, Տէ՛ր իմ արքայ։ Դառն ճշմարտութիւններ յերեան պիտի հանեմ, բայց պիտի չզշարիս։ Վերջինը միայն բռնմ։ զու քեզի հարս ածել տուիր զբոյրն Վաղէսի՛ զլումպակիս։ նախարարաց մեծագոյն ժամին սիրութ քենչ ևնուացաւ, վասնզի նախատինք մը իրենց նշմարեցին ի դժա առ հասարակ Հայկազնիք եւ ժամանանդ գունդը արեւելից բազմազօր տանն Սիսական։ Խեթիւ ակամը կը նային ընդ քեզ ի պատճառս Ոլոմպին՝ բառնալուդ Համար զնախադահութիւն իւրեանց ազգակից Փառանձեմ Տիկնողէն։ Ալէկ շըրիր, արքայ. այս տագնապական ժամանակիս մէջ ջլատել ներքին ուժերը՝ իրհեմութիւն չէ բնաւ։

ԱՐԾԱԿ. Բայց միթէ փոխարէն Բիւղանդեան կայսրութիւնը մեզ զօրավիրտ եւ օգնական պիտի չունենա՞նք, եւ միթէ ազատ չե՞մ կին տոնուլ զո՛ եւ կոմիմ, եւ ընել ինչ որ կ'ուզեմ։

ՎԱՍԱԿ. Ո՛չ այդպէս, արքայ։ օտար թշնամին աւելի վտանգաւոր է ներքին թշնամին։ Եւ ինչո՞ւ մենք մեր ներքին ուժերուն աշեղ կազմակերպութիւն մը շտանք եւ օգնութիւն մուրանք օտարէն։ օտարը միշտ օտար է, այսօր բարեկան, վայլու ո՞գիսէ։ Եւ դարձաւ, է՛հ Տէր իմ արքայ, կը տարակուու՞ս միթէ. արդարել թափանորք իրենց սրտին սէրն անդամ չեն փանդի քաղաքական նկատմունք աշքերնուն եւ մտաց առջեւ միշտ պէտք է ունենան։ Բացարձակ ըսեմ. զու վիրաւորեցիր զլնդուիկ իշխանն Սիւնեաց, որ հզոր է զօրութեամբ եւ քսան հազար այրումից տէր։

ԱՐԾԱԿ. Զի՞նչ. միթէ Փառանձեմայ ինդրանոց զվաղինակ սպաննել տալով Սիսական տոհմին դերակոյն իշխանութիւնը իրեն պարզեւելուս համար այսօր ինձի ապերու՞ս կը գտնուի. բայց չի՞ գիտեր որ ինչպէս տուփ այնպէս պէ՛ կ'առնում։

ՎԱՍԱԿ. Դիւրին է տալը, արքայ, բայց առնորին գգուաքին. մի գոօցէ որ ի ծածուկ նիւթէ քեզի դէմ, յայտնի համարձակ ապստամբութեան դրու պարզէ եւ իր համախոչք ալ՝ որ բազմաթիւ են արդէն՝ իրեն հետեւին։

ԱՐԾԱԿ. Ա՛հ, ի՞նչ ըսեմ ես այդ ներսէսին որ չթողուց ինձ բնաջինը ընել ամէնը մէկէն այդ նախարարութիւնները՝ որ իրենց անսահման իշխանութեամբը իրուխտացեալ՝ Արշակաւանիս շինութեան ժամանակ՝ ինձի դէմ ի մարտ փխափեցին. այս նախարարական դրութիւնն է որ մեր արքունի զօրութիւնը ջլատելով Հայոց թագաւորութեան կործանման պատճառ պիտի ըլլայ, եւ ո՛չ այդ ներսէսի անէծքները՝ որի իմ զլիսու տեղաց իրը չարագուշակ մարդարէ։

**ՎԱՐԺԱԿ.** Գոնէ ինք հոռ ըլլար, արքայ, իւր ձայնին եւ յորդորանաց կ'անսային նախարարք եւ ժողովուրդք առ հասարակ:

**ԱՐԵԱՆ.** Ա'չ, ո'չ Վասակ; միոյ տէրութեան երկու թագաւորք չեն կրնար ըլլար, եւ ներսէս գրեթէ արքայարար կը վարէր, նախարարաց եւ ժողովրդեան սիրուը զրաւեր էր եւ զՅունաց կայսերս անզամ իւր աղդեցութեամբը կը շարժէր։ Իմ թագաւորութիւնտ եռ չեմ ուզեր բաժնել ուեւ մէկու մը՝ նամանաւանդ քահանայական պարեզօտ կրող անձի մը հետ։ Մանր էր Արշակայ քարոզներ լսել անդադար իւր գլխուն, եւ դուինք, Վասակ, հաւատարիմդ իմ, ոչ այնքան խրատուցդ որքան պատերազմական հմուտ արուեստիդ եւ աննկուն արիութեանդ պէտք ունիմ ես։ Յայն խորհէ՛ դու միշտ եթէ կ'ուզես արքայիդ վատահութիւնը լիսվին վայելէլ:

**ՎԱՐԺԱԿ.** Կ'երթամ ես իմ պարտուցս եւ պաշտօնին հաւատարիմ՝ բանակի պէտքերը յանձնանձել։ Բայց լաւ կ'ըլլայ, Տէ՛ր իմ արքայ, որ ազդիդ եւ հայրենեաց օգուտը խորհելով մեր խրատուց չըլլաս անլսող (Կ'երթայ):

### Տ Ե Ս Ի Լ Բ

#### ԱՐԵԱԿ առանձին

**ԱՐԵԱԿ.** Խրատիչ դարձեր են ամէնքը, բայց ամէնէն աւելի ծանր է ինձ լոել զինու զրահից տակ ծածկուած քարոզիչներ։ Շատոնցուընէ պաշտօնէն ձգած էի զինքն ալ, բայց այսպիսի տագնապալից ժամանակի մէջ որ տգէտ եւ կրօնամոլ ժողովուրդը պաղեցուցեր եմ ինչ՝ ներսէս հեռացնելով քովէս, եւ բանակիս վրայ միմիայն յենլու պէտք ունիմ, իսուհետովիւն ըլլար եւ ա'յն դժգուն ընել իր սիրելի եւ յարգած ու պաշտած զօրավարն ալ երեսէ մզելով։ Համբերնենք առ վայր մի... Բաւական տաղտկալի ժամեր անցուցինք, քիչ մ'ալ երթամ սփոփիմ սիրուհու տեսութեամբը...։

### Տ Ե Ս Ի Լ Գ

#### ՆՈՑՆ Եւ ՆՈՒԻՐԱԿՆ ԱՐՔՈՒՆԻ

**ՆՈՒԻՐԱԿ.** Տէ՛ր արքայ, Ոլոմպիս Տիկին հրաման կը ինդրէ ձեղ ներկայանաւ։  
**ԱՐԵԱԿ.** Թող զայ (Նուիրակը կ'նինէ):

### Տ Ե Ս Ի Լ Դ

#### ԱՐԵԱԿ Եւ ՈԼԻՄՊՈԱ

**ԱՐԵԱԿ.** Պատեհ ժամու հասար, իմս Ոլոմպի, աաղտկացած էի տէրութեանս Հոգերովիը։ Աիրուս նեղուած՝ սիրելի գրկացդ մէջ սփոփանք մը փրնաբէի։  
ՈԼԻՄՊՈԱ. Տէ՛ր իմ արքայ, սիրոյ գրկաց մէջ միսիթարութիւն կը փնտուս ինէ,

են սրտի, մտաց հանգիստը արդէն իսկ կորուսած եմ՝ արքունի ապարանիցդ սեմը կոխած վայրկենէս։ Եւ եթէ քու սէրդ չըլլար ինձ ամուր ապաստանի՝ շատոնցուրնէ Ռումախու հողուց աշխարհը փոխուած էր արդէն։

**ԱՐԾԱԿ.** Եւ ինչո՞ւ, իմս Ռումախ։

-**ԱԼԻՄԳԻՒԱ.** Այսքան քու սիրոյդ փօխարէն՝ ատելութիւն, դորովանացդ չափով՝ հակառակութիւն կը տածեն ինձի դէմ, եւ հրովարթք մահօւ բարած են ինձի համար արքայական առավաստիս ներքեւ։

-**ԱՐԾԱԿ.** Եւ ո՞վ կը յանդգնի զարդ ընել՝ երբ Արշակ բոլոր սիրաը քեղի տուած է։ ՊՈԽԳԻԱ. Անոր համար որ բոլորովին սէրդ ինձի գարձուցեր ես։

**ԱՐԾԱԿ.** Եւ ո՞վ է համարձակողը։

**ԱԼԻՄԳԻՒԱ.** Մանր է ինձ ասելը, դու ինքնին կրնաս դուշակել։

-**ԱՐԾԱԿ.** Քեզ զի՞ փոյթ, Ռումախ, քանի որ վատահ ես իմ սիրոյ։

**ԱԼԻՄԳԻՒԱ.** Բայց երբ քու սիրոյդ թեւերուն տակ պահուած մահուան հրեշտակը ամէն փարիկեան ինձ կը սպառնայ։

**ԱՐԾԱԿ.** Եթէ զու չգիտես, Ռումախ, զիսէ բովանդակ աշխարհն Հայոց թէ որքա՞ն բուռն է Արշակ իւր կատաղութեանը մէջ, եւ դիւրին չէ խաղ առնել իրեն հետ։

-**ԱԼԻՄԳԻՒԱ.** Գիտէ՞ արդեօք եւ Տէրն իմ թէ վիրաւորեալ սէր մը կնոջ սրտին մէջ որպիսի՞ Հրէներ սնուցանել կարող է։ կը սոսկած ես, Տէ՛ր իմ։

**ԱԼԻՄԳԻՒԱ.** Դու փափուկ ծաղիկ մ'ես, Ռումախ, Վոսփորի ափանց վրաց սնեալ։ զքեզ սիրեց Հայոց արքայն Արշակ, թող նախանձընդէքմ քու փառացրու։ Կտոսէ զողին իւր Փառանձմունք եւ գոփանակ նախանձելու առ քեզ ունեցած մեծի սիրոյմ՝ ջանայ թող արժանանալ իմ չնորհաց։

**ԱԼԻՄԳԻՒԱ.** Է՛հ, Տէր իմ արքայ, քու չնորհացդ արժանանալու ամենէն դիւրին ճամրան միթէ իրդի հակառակորդը մէխուզդին վերցնելը չէ՞։ Բայց ո՞ւր զինաց յայնամ քու սէրն առ իս, ինչո՞ւ թողուցիր զիս Բիւղանդեան արքունեաց մէջ։ Եթէ Հայոց թագուհի շըլայի, կը գտնէի անշուշտ սիրու մը իմ սիրուու երջանիկ ընկու եւ փոխաղարձարար իւր սիրովը երջանկանալու։ Զի՞նչ չար ըրեւ էի քեզ։ Փոխեցիր զիս Հայրենի հողէն օտար պանդիստութեան մէջ ուր բաց ի քէն, ամէնքը թնամի կամ անտարբեր աչօք ինձի կը քայլին գ ֆոնէ քու սէրդ զիս ամէն կերպով կարենար ապահովել։

**ԱՐԾԱԿ.** Կը տարակուսիս միթէ, իմս Ռումախ։

**ԱԼԻՄԳԻՒԱ.** Ոչ թէ քու սիրոյդ վասահձմէնքի Արշակ, քաւ լիցի, բայց քու հըրամաններդ շատ բարդէն, կը թոփն եւ հակառակորդին որոպայթները շատ ծածուկ կը թարին ինձի գիծուն և եթէ յամենան զգուշութենք ձեռք տուած շըլլայի մինչեւ ցարքը կ'ունենացիք թերեւս իմ տեղս՝ շերիմ մը զիս ամփոփող, եւ թերեւս ըսնի մը կաթիլ արցունք շատ շատ ինձի նուիրէիր՝ որ երիտասարդներեան ծայրիկ հասովիս մէջ Հայրենիքէս զրկուած, եկայ խամրելով հացածուանի պառնամած լերանց մէջ, ապարած զոհ քինու, նախանձու եւ ձեռնութեան։

**ԱՐԾԱԿ.** Ա՛հ, ո՛չ, նազելիս, քու պիրաւունք խօսքերուդ ազգեցութեան ներքեւ կը զգամ որ զես նոր ապրիլ կը սկսիմ։ Կեանք մը յիս կ'արծարծի, կեանք մը սիրոյ եւ հեշտից անարդար։ Անարդար Փառանձմայ պաղ գրկածութեան ներքեւ մեռած էի՛ կարծեկ՝ ամիմիայն մտատանջ տէրութեան հոգերով պաշարեալ։ Փո՞ք հրեշտակնիրոյ, հաղիւ թէ քու թեւերուդ մէջ կենաց սէրը ինձի պիտի ներշնչիսկ իւ ես թողում որ իմ հրեշտա-

կիս թեւերը խորտակե՞ն։ Կ'երդնում քու սիրոյդ վրայ որ մահարեր  
պիտի ըլլայ։

ՈԼԻՄԳԻԱ. ԱՇՀ, ՖԻՇ, Տէր իմ, մի՛ երդնուր իմ սիրոյս վրայ։ չեմ ուզեր որ մա-  
հարեր ըլլայ իմ սէրս եւ ոչ խսկ իմ ոխերիմ թշնամւոյս, միայն թէ զիս  
ի մահուանէ ապրեց։

ԱՐՃԱԿ. Ի բաց վանէ մտքէդ այդ անտեղի մտածութիւնը, անձկալիդ իմ ի Ծո-  
գի, վատահ լեռ որ Արշակ պիտի չընողու կեանքը երեն սիրելի ընող սի-  
րուն էակը յափշտակեն իր գրկէն։ ԱՇՀ, իմս Ոլոմպի, իրը ամէն  
կողմէ գառնացեալ քու սիրելի բազկացդ մէջ զոնէ վայրիկ մի միսիթա-  
րութիւն եւ սէր գտնել կը փութամ, զու ալ ցաւօք եւ հոգերով պա-  
շտիւալ, անուշ հրեշտակ, տիուր երեսդ ինձի կը գարճնես եւ իմ յոյս  
ի գերեւ կը հանես։ Ուրեմն չիկայ ինձի համար ափոփանք ոյ ուրիշ,  
եւ ո՛չ իսկ առ քեզ։ Դատապարտեալ է Արշակ միմիայն ցաւոց եւ մտա-  
ծութեանց, ափո՞ս։ (Կ'իյնայ Վսախոն ի վերայ զահոյից)։

ՈԼԻՄԳԻԱ. (Ալանձին) ԱՇՀ, ի՞նչ ըրի, Երանի թէ այսափն ալ ըսած ըլլայի,  
եւ ի՞նչ օգուտ։ (Բարձր) Ներէ՛ ինձ, իմս Արշակ, եթէ քու գառնացեալ  
սրտիդ վրայ գառնութիւն մայ ևս յաւելի, ես որ պէտք էի զեզ մը-  
իմիթարէ եւ քու կենաց բեթեւցնել։

ԱՐՃԱԿ. ԱՇՀ, ո՛չ, սիրելիս, երպ պարզ է ճակատդ անուշ, իմ  
Հոգերս կը փարասոին։ Երբ Բիւզանուեան ափանց սոխակին նման լոեցնել  
կու տառ ինձ անուշ ձայնի՝ իմ ցաւերս կը մեղմանան։ Ուստի ե՛կ, սի-  
րունիս, գոնէ վայրկեան մը սփոփելու համար, արթնցուր մտացս մէջ  
զշժադադեղ Վոսփորիք յիշատակը։ զու Հոգի առ եւ ինձի սիրս տուր։  
ՈԼԻՄԳԻԱ. Քու հրամաններդ, Տէ՛ր իմ Արշակ, պատգամ են ինձի։ սիրող սիր-  
ուին հնագանդիլ հաճոյք մէ՛ արդէն։ (Կանգ առնելով, ինքնիրեն) ԱՇՀ  
հայրենի յիշատակներ, ողողեցէ՛ ներշնչելով ի հոգիս եւ սիրելուոյ  
սիրու կազդուրեցէ (Դժխոյն Ոլոմպիս երգէ կիրառի)։

### Ն Բ Գ

Կապոյտ է երկին,  
Կապուտակ ծովին  
Ի ծայր Ֆըփանաց  
Սըլանայ նաւակ,

Սիրոյ պատանեակ  
Բերէ ըզծովափ,  
Ի զան գիշերին,  
Ի բայս լուսնեկին։

Ի յարկը վերին՝  
Ասուը մի փայլէ  
Կոյն մի լուսնեթոյի  
Զքնալ Վոսփորին և

Մագեր ճերարձակ  
Բանայ ըղվանդակ  
Եւ մի փունջ ծաղիկ  
Սըփաէ ի նաւակ։

Սրացէ՛ք, ալեակք  
ի ճաճանչ լրասնիք  
Զեփի՛ւոք անուշակք  
Տարէ՛ք ըղնաւակ :

ԱՐԾԱԿ. Իմս Ոլոմպիի, ինչպիսի՞ դիւթիչ զօրութիւն շրթանցդ մէջ կը յածի :  
Ահա՛ երդոյդ քաղցրութեամբ թովեցիր զիս . չդիտեմ Հելլէնուհեա՞ցդ  
է տուեալ՝ որսալ զսիրտ եւ զմիշտու ամոռել :

ՈԼԻՄՊԻԱ. Ո՛չ, Տէր իմ, այս քու սիրոյդ արդիւնքն է միմիայն... Բայց ահա  
Տիկին Փառանձեմ :

Դ

## ՏԵՍԻԼ Ե

ՆԵՋՅ, ՓԱՌԱՆՁԵՄ և ԶԱՐՄՐԻՆԵ

ՓԱՌԱՆՁԵՄ. Քնարիդ ձայնէն հրապուրեալ՝ եկայ ես, Տիկին. գուցէ ձեր տե-  
սութեան արդելք լինի՞ :

ԱՐԾԱԿ. Տիկին :

ՓԱՌԱՆՁԵՄ. Գուցէ, Տէր իմ Արշակ, իմ ներկայութիւնս ձեր սիրային տեսու-  
թիւնը վրդովելու պատճառ ըլլայ :

ԱՐԾԱԿ. Եթէ զիտէիր զայդ, Բնէ Հարկ կար ուրեմն...

ՓԱՌԱՆՁԵՄ. Տիկինն Ոլոմպիս այնշափ անուշ կ'երգէր, որ չկրցի դիմանայ .  
Բիւզանդական արքունեաց մէջ յատկապէս կրթուած պիտի ըլլայ յերգու  
եւ ի քնարս :

ՈԼԻՄՊԻԱ. Բնէ ըսեկ կ'ուզէք, Տիկին :

ՓԱՌԱՆՁԵՄ. Ըսեկ կ'ուզէմ թէ բոլոր արքունեաց մէծ բերկրութիւն կ'ազդէք :  
ՈԼԻՄՊԻԱ. Եւ թերենս ձեզի՞ տանջանք . բայց Հանդարտեցէ՛ք, ահա կը թողում  
զձեզ առանձին : (Արշակայ) Կ'երթամ ես, Տէ՛ր իմ :

ԱՐԾԱԿ. Կ'երթամ... Հաւագոյն չէ՞ր հոս կ'ենայիր :

ՈԼԻՄՊԻԱ. Ո՛չ, Տէր իմ, ո՛ : (Ոլիմպիա կ'առնեու կը քալէ) :

ՏԵՍԻԼ Զ

ԱՐԾԱԿ Եւ ՓԱՌԱՆՁԵՄ

ՓԱՌԱՆՁԵՄ. Ինչո՞ւ Հեռացաւ, Տէ՛ր իմ, Տիկինն Ոլոմպիս... կ'երեւի թէ....  
ԱՐԾԱԿ. Տիկին, քանի որ Բիւզանդեան արքունիքէն բերել տալով սրտիս եւ  
զահոյս կցորդ ըրի զնէ՝ եւ նա յանկոյց իմ սէրս առ ինքն, չեմ ներեր  
որ իմ սրտիս սիրածը ուեւէ մէկու մը Հակառակութեան եւ ար-  
համարհանաց ենթակայ ըլլայ, կը հասկան՞ս, Փառանձեմ : Այս՛, պար-  
գեւք են երկնային ինչպէս զիմաց գեղեցկութիւն՝ նոյնպէս ձայնի եւ  
լեզուի անուշութիւն : Զգուշացի՞ր, դուռար Անդովկայ, իժ չարաթոյն  
բունեալ սրտիդ մէջը՝ վաղաժամ գեղեցկութիւնդ չխամրէ :

ՓԱՌԱՆՁԵՄ. Դո՛ւ կոխեցիր ջախջախեցիր օձին զլուխը՝ հրեշտակ մը սիրոյ առ  
քեզ ձգելով եւ սիրտդ իրեն նուիրելով, ա՛լ ինչ հոդդ : Փառանձեմին  
կը մնայ այսուհետեւ լալ իւր վաղամենիկ պատանեկին վրայ՝ որ գեռ

Digitised by

A.R.A.R. @

սիրոյն փափկութիւնը չվայելած, դաւաճանեալ ի մերձաւոր ազգականաց, տարապարտ եւ տարաժամ ի մահ վարեցաւ:

ԱՐԵԱԿ. Մինչեւ ցէ՞րը յիշեցնել պիտի տաս ինձի այդ տիսուր պատմութիւնը. Եթէ այդ առաջնան զօրաւոր եւ անմուանալի է այդ սէրդ, գնա' դու փակուէ քու սենեակներուդ մէջ՝ սիրելուոյդ յիշատակօքը պաշարեալ, եւ մի՛ գար վրդովելու իմ հանգիստ:

ՓԱՌԱՀԱՅԵՄ. Ո՛չ այլպէս, արքայ: Այո՛, պիտի գամ ես խոռվելու հանգիստ, ամէն ատեն, ամէն առթիւ քու սիրոյ ժամերգ դառնացնելու, թոյն թափելու երախանիդ մէջ: Կարծեցիր որ գիւրին է վիրաւորել սիրտ մը, եւ բաւական չէ այդ՝ վիրաւորեալ սիրտը խաղ առնել ըստ քմաց քոյ հաճոյից:

ԱՐԵԱԿ. Բայց գիտե՞ս, Փառանձեմ, որ տէրն եմ ես տակաւին:

ՓԱՌԱՀԱՅԵՄ. Կենաց եւ մահու տէր ես, այո՛, բայց ո՛չ թէ իմ սրտիս եւ ո՛չ իսկ լեզուիս: Ցորքան կենդանի եմ՝ պիտի չդադրիմ արդար բողոքներս լսենել տալիք քեզ: Ես արդէն կենանքիս ձեռքս վերուցեր եմ՝ քանի որ դադրեցաւ ապրելէ իմս Գնէլ:

ԱՐԵԱԿ. Եթէ չես ուզեր վաղընթիւթ նմա հետեւիլ, իջեցո՞ւր այդ քու սրտիդ գոռողութիւնը եւ չափ զիր քու ապերասան լեզուիդ, մի գուցէ զղաս անազան: Ահա կ'երթամ ես տէրութեան հոգերը յանձանձելու. բաւական են Արշակայ ժատանջութեան նիւթք, գու եւս քու կողմանէդ մի՛ յաւելուր: Գիրոցիր որ այս են կամք Արշակայ եւ վերջին քեզ պատուէր (Արշակ կ'նենէ):

## Տ Ե Ս Ի Լ Է

## ՓԱՌԱՀԱՅԵՄ

ՓԱՄԱՀԱՅԵՄ. Իմ պատիւս ոտնակոխ ըրած ժամանակդ միթէ դու զիս մտարերեցի՞ր: Ի՞նչ փոյթ ինձ քու տէրութեանդ հոգերը. ինչ որ ցանեցիր՝ այն պիտի քաղես:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ

(Տար. 2)

# PARVANA

I

The Aboul mountain and the Muttin heights,  
 Back to back majestically stand,  
 Bearing on their shoulders, in stately might,  
 Higher than Djavakhk another land.

It is said that there, like an eagle in pride,  
 In the bosom of the blue sky, smiling,  
 In his Parvana palace white,  
 Sat those grand highlands' king.

The king of Parvana had a fair daughter,  
 No roe of such great beauty,  
 Had ever been seen by any hunter,  
 Hunting in the highlands of Muttin.

She adorned, with her childhood lively,  
 Her father's old age and his mountain heights,  
 And the aged monarch lived happily  
 With his sweet flower in blissful delight.

But still before her lay the greatest day;  
 When that day arrived, in his happiness,  
 The monarch dispatched many envoys gay,  
 To every palace and every fortress.

«Where is that valiant man — if there be one —  
 Worthy of my beautiful daughter?  
 Let him mount his horse, come with his weapon,  
 Show his bravery and take his fortune.»

II

Bearing weapons, in armour suits,  
 Mounted upon horses savage,  
 Arrived all Caucasian youths  
 And crowded before the stage.  
 In front of the palace building  
 Of the aged Parvana king,  
 Girth and ready, are now waiting  
 For the contest to commence.  
 All the multitude that has come,  
 And gathered at Parvana, wait  
 To see who is the lucky man  
 That will win this pretty maid.

The trumpet sounds, and in clusters,  
 The courtiers and the maids appear,  
 Now steps out the monarch's daughter  
 And the white-haired king with her.  
 The father like a gloomy cloud,  
 The girl, sweet moon; together  
«Աւագումքի թիւն զնացինք այցելութեան էջմիածնի ուսումնարանին, մեր զնացած ժառանակը աշակերտները ճաշ ուսելու էին զնացիք: Թէ՛ պէտ ուսումնարանը այն օրից երբ յանձնուած է տեսչութեան նղիազար Արքայի սկզբունքն, մի առանձին հոգացողութեան տակ է ի մասին բարեկարագութեան թէ՛ բայ ուսումնականին եւ թէ՛ բայ տնտեսական մասին, յայց ուսումնարանի սենեակները, նաեւ աշակերտաց ննջաբանները ժութն են ևս ան յարժար:

«... Ուսումնարանի աշակերտը Պ. Տէր Յովսէփեանցի ձեռամբ ինձ մօտ իրկել էին իրանց հայերէն շարադրութիւնը տեսանելուն և նո զննեցի եւ տեսայ նոցա աշխոյժը, ջանքը եւ ընդունակութիւնը: Լաւ գրում են հայերէն զրարար լիզուով եւ շարադրութեան նիւթերից երեւում է, որ նոցա ուսումնաւելի կրօնական եւ պատմաբանական է, քան բանաստեղծական և նո իւրաքանչիւր շարադրութեան ներքոյ գրեցի իմ նկատմունքներս եւ խրախոյաններս եւ վերադարձին (5):

Յակոր Կարինեանը էջմիածնում գտնուած օրերում այցելում է նաեւ Ս. էջմիածնի գրադարան-ժառանադարանը եւ լաւ տպաւորութիւննեռով իր հիացմունքն է յայտնում մատենազարանապետ Դանիէլ Վարդապետ Շահնազարեանի մասին, որին եւ խոստանում է իր ծախով հրատարակել Ս. էջմիածնի Մատենադարանի ձեռագրաց ցուցակը, ինչպէս այն կատարում է: Այն հրատարակում է աշխատասիրութեամբ Դանիէլ Վարդապետի, իսկ հրատարակչութեան ծախսերը հոգալով Կարինեանը՝ ցուցակը կոչում է Կառրինեան ցուցակ:

Մատթէոս Առաջինի յաջորդը՝ Գէորգ Զորբորդ, նոյնպիսի մի անդամարար Վարդապետարան գտաւ էջմիածնում, ինչպիսին եղել էր Աշտարակեամ Եփրեմ Կաթողիկոսի օրերին: Այդ անմիիթար դրութիւնը հենց ստիպեց նոր Կաթողիկոսին՝ արքատական քայլեր առնել Վարդապետարանի մասին:

1874 թուին Գէորգ Զորբորդին (1866-1885) յաջողուց բացել մի նոր տեսակի գպրոց, որը ինքը անուանեց Գէորգեան ձեմարան, բայց իր կաթողիկոսութեան սկզբից իրեն ժառանգութիւն մնացած ժառանգաւորաց վարժարանը շարունակեց ապրել մինչեւ 1882 թուականը:

1888 թուին Արարատ աստվածում շահեկան տեղեկութիւնների են, ու հանդիպում Մայր Աթոռի ժառանգաւորաց գպրոցի՝ ապրեմերի քննութիւնների ժամանակ ցուցարերած յառաջադիմութեան մասին: Այդ առթիւ վերատեսուչ Անդրէան Արքեպիսկոպոսը զեկուցում է:

«Ձեզ, եւ բոլոր միարանութեան շատ լաւ յայտնի է, որ մեր մեռնափառ կաթողիկոսը (Գէորգ Դ - Վ. Ե. Տ. Տ.), Հոգևոր գլուխ Հայաստանեայց Եկեղեցւոյ ընտրուելին յետոյ միահամ հաւանութեամբ բովանդակ աղդիս՝ հոյ տարաւ էջմիածնայ ժառանգաւորաց գպրոցը բարեկարգելու եւ ուսման ա-

(4) Օրմանեամ, «Ալգապատաւմ», Պ., էջ 4000:

(5) Կուսենք Հայոց աշխարհին 1802, թիւ 5, էջ 374:

ուարկաներու լրջանը բնդարձակելու, որով ոչ միտյն նորա մէջ ռուռերէն եւ դնդղիերէն լեզուները մուտ գտնեն, այդ եւ քանի մը չափահաս տարկաւագներ եւս անխոնջ ջանասիրութեամբ պարապել սկսուն նոյն լեզուներով (3):

Ս. էջմիածնի ժառանգաւորաց վարժարանը այդ ժամանակամիջոցում ունեցել է յատուկ կանոնադրութիւն եւ կանգնած է եղել իր ժամանակի կողմակիրպուած ուսումնական հաստատութիւնների հետ համահաւասար: Արարան ամսագիրը համարեա՞ ամէն տարի տալիս է այդ վարժարանում տարուած աշխատանքների եւ տարեկերջի քննութիւնների արդիւմքների մասին մանրամասն տեղեկութիւններ: Այդ մասին գաղափար տալու համար մէջրենքում ենք մի քանի մանրամասնութիւններ 1868 թուից:

Կաթողիկոսական յատուկ որոշումով քննութիւնները սկսում են Յունիսի 26ին: Քննութիւններին ներկայ են՝ ինուում կաթողիկոսական տեղակալ Սարդիս Արքեպիսկոպոս Զալյաբեանը, Յովհաննէս եւ Եղիազար Արքեպիսկոպոսները, Սինոդի անդամներ՝ Թագէու եւ Գրիգոր Վարդապէտները, Էմմանուէլի ուսումնական թղողիք անդամները եւ այլ բարձրաստիճան հոգեառականներ ու աշխարհականներ: Քննութիւնները սկսում են կրօնից, յետոյ անցնում են հայոց լեզուն (դասարիօն՝ Զալալ Զալյաբեանց): Վերատեսուշը դոհունակութեամբ արձանագրում է, որ հայկերտքս իւրաքանչիւր դափու կարողութեան՝ ուղղութեամբ կը լուծէն իրենց առաջարկուած կրօնական ինդիբները՝ նոյնական հայերէն լեզուից բաւական մարդ չանդիսացան, երբ քերականական եւ ճարտասանական կանոնադրութիւններ առաջարկուեցան իրենց: Որոյ վասն եւ ուսուցիչը ստացաւ չնորհակալութիւն հանդիսականներէն (4):

Իւրաքանչիւր քննութեան յամկացւում էր մէկ օր: Կրօնի եւ հայոց լեզուի քննութիւնները յանձնելուց յետոյ, ըստ Արքաւարի, ուսանողները դանձնել են գաղղիերէն եւ ուռակերէն լեզուների քննութիւնները: Գաղղիերէնի դասախոսն է եղել Կ. Բոյաջեանը, որն իր ուսումը ստացել էր Փարիզում, եւ ուռասց լեզուի դասախոսն էր Սարգս Մարտիքեանը, շրջանաւարտ Խալիկեան վարժարանից: «Եւս երկու լեզուաց քննութեան ժամանակ աշակերտուց համարձակ եւ անշնորթ պատասխաններէն կարելի է նորակացնել, որ այն երկու վարժապետները պարապ անցուցած չեն իրենց դասաւանդութեան ժամանակները, այլ դիւրմրոննելի եղանակով աշխատած են իրենց գիտցածը ազգասիրական ոգով հաղորդել ազգին մանկանց» – գրում է վերատեսուչ Անդրէս Արքեպիսկոպոսը 1868 դասումնական տարրուայ վերջում արած իր զեկուցման մէջ (5):

Այս բայորից ազդուելով, Ս. էջմիածնի միաբաններից համբաւաւոր եղիազար Արքեպիսկոպոսը յիշեցնում է աշակերտներին ուսման մեծ կարեւորութիւնը եւ նրա օգուտները, ու իրախուսում աշակերտութեամբ՝ սէր զէպի ուսումը, յիշատակելով նաեւ Գէորգ Զորբորդի նրանց վրայ տածած ինամքը եւ ազգաշահ ձեռնարկութիւնները:

Ս. էջմիածնի ժառանգաւորաց գպրոցի հերթական պատմութիւնը չարադրելու համար տանք այդ դպրոցի 1869 թուականի գպրոցական կեանքի պատկերը, որը եւս արտացոլուած է 1869ի Արքաւար ամսագրի Յունիսի հա-

(6) Արքաւար, 1868, էջ 62:

(7) Արքաւար, 1868, էջ 63:

(8) Նոյն տեղում:

ժարի 60–61 էջերում։ Այդ տեղից տեղեկանում ենք, որ Ս. Աթոռի ժառանչաւորաց ուսումնարանի հարցաքննութիւնը Մայիսի 26ից սկսելով աւարտը ւում է Շունիսի 15ին։ Հստ նախընթաց սովորութեան, 1869 թուականի տարբերձի քննութիւններին մասնակցում են Մայր Աթոռի ժիաբանութեան անգամները, ինչպէս նաև Արմաշի փանահայրը և Պանարժայի պոաջնորդը, ուրաք Մայր Աթոռում հիւր էին գտնեսում այդ միջոցին։

«Համեմատութեամբ անցեալ տարիների՝ այժմ ուսումնարանը կարեւոր տարականներով զարգացած է, եւ աշակերտաց ու գաստիարակաց փոխադարձ ջանքերը կը պատկեն ինչպէս Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն հայոց, նոյնպէս սիրելի ազգիս իշեմբը։ Մակայն այսուամենայնիւ կրկին պէտք է խոստովանիլ, որ կան տակաւին բաւական առարկայից պահասութիւններ, մանաւանդ երբ նոր ուսումնարանի շինութիւնը կ'աւարտի»(9)։

Հստ քննութիւնների առիթով արուած տեղեկադրի, 1869 թորին Ս. Էջմիածնի ժառանգաւորաց վարժարանը ունեցել է Ա և Բ գասատուններ (գառարան), որտեղ սովորելիս են եղել՝ Ա դասարանում 21, իսկ Բ դասարանում՝ 17, ընդամենը 38 հոդի։ Այդ ուսումնական տարում Ս. Էջմիածնի ժառանգաւորաց վարժարանում դասաւանդուել են 11 առարկաներ. դրանք են՝ Կրօնադիտութիւն, Սրբազն Ռէւստի Պատմութիւն, Հայկաբանութիւն, Աղքային Պատմութիւն, Ընդհանուր Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Ռուսական ասերէն, Թուարանութիւն, Գաղղիերէն, Վայելչագրութիւն եւ Երգեցողութիւն, իսկ Հետազույամ նաև՝ Բնական Պատմութիւն։

Ս. Էջմիածնի ժառանգաւորաց վարժարանը Գէորգ Զորբորդի օրով հասնում է իր բարձրութեանը. մանաւանդ երբ 1869 թուականի աշակերտների ցոլցակը համեմատում ենք ապագայ Հայ Եկեղեցու հոգեւորականների ցուցակի հետ։

Արարատ Հայրապետական ամսագիրը ընեղ տալիս է տեղեկութիւններ նաև 1870 թուականի ուսման մասին։ Այդ տեղեկագրից իմանում ենք, որ ամամեցի Հարցաքննութիւնները սկսուել են Մայիսի 20ից, վերաբեսուչն է եղել նոյն Անդրէսա Արքեպիսկոպոս։

Այդ տարուայ քննութիւնները զարձեալ յաջող են եղել, որով, արդարի, ներկայ գտնուողները հիացել են աշակերտների պատասխաններից(10)։

Ս. Էջմիածնում Հրատապ Հարց է դրում նոր ուսումնարան կառուցելու։

Ժամանակակից Վահան Վարդապետ Բաստամեանը ձեմարանի բացման նախօրեակին այդ դպրոցի մասին ասում է։

«Բաւական կը լինէր բարեկարգել ըստ ուսումնական մասանց Հին ուսումնարանը, ուր արդէն կան յիսունի չափ աշակերտներ»(11)։

Վանքի ժառանգաւորաց վարժարանի տեսուչ է եղել նաև Գէորգ Վարդապետ Սուրբէնեանը (Հետազոյում Գէորգ Զինգերորդ Կաթողիկոս, 1911 – 1931)։ Այդ մասին Բաստամեանը իր նշանաւոր տարեղրութեան մէջ ասում է. «Գէորգ Վրդ. Սուրբէնեան... վանքի դպրոցի տեսուչ դուռը... որտեղ եւ դասախոսում էր»(12)։

ՎԱՀԱՆ ԵՊՈ. ՏԵՐԵԱՆ

(Հար. 8)

(9) Արարատ, 1869, էջ 60։

(10) Արարատ, 1870, էջ 101։

(11) Մատենադարան, ճենազիր 7617 (Տարեգրութիւն), էջ 167։

(12) Մատենադարան, նոյմ, էջ 412։

## ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

### ԲՐԻՆՍԹԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

### ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Նիւ ձըրզի նահանգի Բրինսթըն Համալսարանի Զեռագրատան մէջ ի պահ դրուած են Հայերէն հինգ ձեռագիրներ եւ կարգ մը պատառիկներ, զորս տեսնելու առիթ ունեցանք եւ որոնց ցուցակագրումը ստորեւ կը ներկայացը-նենք: Յիշեալ ձեռագիրներէն չորսը Robert Garret Collection-ի, Համար 19-22ի ներքեւ դասաւորուած են, իսկ հինգերորդը թիւ 14399 կը կրէ:

Զ Ե Ռ Ա Գ Ի Բ Թ Ի Ւ 19

#### ՍԱՂՄՈՍԱՐԱՆ - ԺԱՄԱԳԻՐՔ

Զեռագիրս ամփոփ Մաղմոսարանի եւ լժան Ժամագիրքի Համար մըն է:

Նկարագրման մասունքները - Նիւր՝ բարակ մագաղաթ: Կողք՝ ասխտակեայ կաշեաւատ: Մեծուրին՝  $12 \times 9 \times 2$  սմ.: Թուական՝ մԶ Դար: Թերք՝ 100: Հանգամանելի: Լաւ: Գրուրին՝ կարմիր եւ ոսկեգիր գլխագրերով զարդարուն: Թերուրին՝ սկզբուն որոշ թիւով թերթեր կը պակսին: Յիշառակարան՝ չկայ:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ - Զեռագիրս կը սկսի «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս» սաղմոսով: Թերթ 30ով կը սկսի Ժամագիրքը «Հրաժարմք» աղօթքով, Հաւատոյ Հանդասակով եւ մեղայով: Թերթ 42ով կը սկսի Գիշերապաշտաման կարգը «Տէր եթէ զշրթումն իմ» սաղմոսով, ուր գեղեցկօրէն կը յատկանշուրին լուսանցքի զարդեր եւ ոսկեգիր առաջին սողը: Յաշորդարար Առաւտօնեան, Արեւագալիք թերթ 67ր-, Հասարակաց Ազօթից Գ. ժամ -75ր-, Զ. ժամու եւ Թ. ժամու: Զեռագիրս կ'աւարտի «Հաւատամք»ի «յարարիչն երկնի եւ երկրի երեւ բառերով:

Զ Ե Ռ Ա Գ Ի Բ Թ Ի Ւ 20

#### ՀԱՄԱՌՈԾ ՁԵՌԱՑ ԺԱՄԱԳԻՐՔ

Զեռագիրս պահուած է իր յատուկ չափով կանաչորակ կաշեաւատ առուփի մը մէջ: Կողքը՝ արծաթապատ եւ մԶ Դարու արուեստագիտ արծաթա-դործի ձեռագործ է:

Նկարագրման մասունքները - Նիւր՝ թուղթ: Կողք՝ արծաթապատ, քանդակ-եալ: Թուական՝ մԶ Դար: Հանգամանելի՝ գոհացուցիչ: Մեծուրին՝  $9 \times 7 \times 4$  սմ.: Թերք՝ 203: Թերուրին՝ սկզբուն որոշ թիւով թերթեր կը պակսին: Յիշառակարան՝ չկայ: Առաւելուրին՝ արծաթապատ քանդակ եւ յիշառա-կարան:

ԿՈՂՔԸ Առաջին կողքի քանդակ՝ Յիսուսի ծնունդը՝ վերեւը՝ հը-  
րեւտակներ՝ աջին՝ Մարդամ և Յովաչի. Երկու այլ մագորիկ՝ կեզբարձ Յի-  
սուս մանուկ մսուրի մէջ. Երկու կենդանիներ՝ Երկրորդ կողքի քանդակ՝ Ս.  
Երրորդութիւն՝ Յիշատակարան կողքի՝

«Ժամապիրք այս արեալ հայակ ընչիս իւր զարթարեցի պրզաթաւ  
կեսարիա քաղաքին անարժան ձեռօքարդաթագար Շահնշահիրին Ս. կ ը ու ո.  
թիւին ՌՃԲ (1102+551=1653):

## Զ Ե Ռ Ա Գ Ի Ր Թ Ի Ւ 21

### ԶԵՌԱՑ ՇԱՐԱԿԱՆ

ՆԿԱՐԱԴՐԱԿԱՆՆ Ա ՆԻՒՐ՝ ԹՈՎՈՓ՝ Կողք՝ արծաթեայ քանդակեալ:  
Մեծուրիւն՝  $16 \times 11 \times 6$  ամ- թիւրք՝ 269: Հանգամանի՛ լու։ Գրութիւն՝  
Խոտքարք և խոտքարքեալ; Թուական՝ Ժի Դար: Յիշատակարան՝ չկայ: Լու-  
սանցազարգեց մէջ ընդ մէջ կան, տակայն ոչ շատ բարձր որակով, ընդհան-  
րապէս թռչային եւ բուքային նկարներով: Թուական արծաթապատման՝  
ՌՃԲ (1119+551=1670):

ԿՈՂՔ Ա Արծաթեայ քանդակեալ Առաջին կողքին յատակը արծա-  
նագրուած է. «Յամօթ լիցին ամենեւքեան որք շարշարեն զծառայս քո»: Ետե-  
սի կողքին վրայ գրուած է. Կժամապիրք այս արեալ հայալ ընչիս իւր զար-  
թարեցի արզաթաւ կեսարիա քաղաքին անարժան ձերօք արծաթարդործ Մալ-  
խասին Ս. Օհաննի Թուին ՌՃԲ վասն յիշերութեան ամենայն ժամ եւ գոհա-  
նալ փրկչին մերոյ Յսի Քսի»:

#### Իսկ յատակը՝

«Մերախ եղի ես ոյք ապէին ցիս՝ ի տուն տէառն զնասցուք մեք սաղ-  
մուը: Կողքին քանդակեալ նկարն է այրի կնոջ լոււման որ գանձանակի մէջ  
դրամ կը զգէ, կանդնած տաճարի զրան առջեւ: Տաճարը աւելի վերը իր ամ-  
բողջութեամբ քանդակուած: Աջին, Յիսուս եւ Երկու աշակերտներ կը նային  
այրի կնոջ: Առաջին կողքի քանդակեալ պատկերն է վերջին դատաստանը: Աստուած Երկնքի մէջ Հրեշտակներով շրջապատուած որոնք փող կը Հնչեցը-  
նեն: Զախին՝ զժուիք ներկայացնող կրակի, իսկ վարը, տղին՝ ծիաւոր մը եւ  
Երկու զինուորներ իրենց սուրբերով:

ԲՌԱԿԱՆԴԱԿՈՒՄԹԻՒՆՆ ԹԻԵՐԹ 1ը կը սկսի Կանոն գ. աւուրդն-ի «Խակից  
Հօր եւ Հոգուոյն անսկիզբն որդի անմայր յառաջնումն տնարակին եւ ընդ Հօր  
յաւիտեան» շարականով: Ամէն Կանոնի սկիզբը պարզ թոշնապիր է եւ Խոաջին  
Երկու տողերն ալ կարմիր մելանով:

Կանոն գ. աւուրդն կիսով միայն կայ: Առաջին մասը կը պակսի: Կանոն  
դ. աւուրդն կը սկսի թիերթ 2թ-էն: Լուսանցազարդեր ոչ բարձր արուեստով մէջ  
ընդ մէջ զարդարած են մատեանը:

Թիերթ 93թ-ի յառակը հօարգիր գրուած է. «զմելսաթաւալ զայիքսան  
երէցս յիշեան ի տէր»:

Յայոնի է որ 93րդ թիերթէն ետք առնուազն մէկ թիերթ կը պակսի, ուր  
պէտք էր սկսուէր Կանոն Սրբոյ Յարութեան եւ օրուան Օրհնութիւնը՝ «Ա.ս-  
օր յարեաւա»:

Թիերթ 170թ-ի վարը կայ յիշատակարան մը.

«Զեռը փաթ եւ Հողանա

փոշի մոխիր ւ անպիտանա

գիրս յիշատակ առ ձեզ մնա  
թերան մասէք տէր ողորմեա . աղաշեմք :

Թերթ 269ր-ը մատենիս վերջին էջն է , ուր «Խորհուրդ խորին» չա-  
րականի վերջաւորութեան չասասծ էջը կ'աւարտի հետեւեալ բառերով . «Խո-  
մամբ թադ ի զլուս պատեսցես զզմիս և չպայարան . խաչանիչ ուր» :

## Զ Ե Ռ Ա Գ Ի Բ Թ Ի Ւ 22

### ՍԱՀՄՈՍԱՐԱՆ ԴԱԼԻԹԻ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ - Նիւթը մագաղաթ : Կողք՝ տախտակեայ կաշեպատ .  
կազմը՝ փճացած : Համգամանեակ՝ շատ լաւ : Գրաքիւն՝ նօտրգիր : Թուական՝  
ժի Դար : Տիշատակարան՝ ունի : Պահպանակ՝ մագողաթեայ : Լուսանցա-  
դարդեր՝ գեղեցիկ , գունաւոր եւ թոշնագիր : Յաւելուած՝ Ս . Ներսէս Շնոր-  
հալիի «Հաւատառվ խոստովանիմ» :

ՑԻՇԱԾԱԿԱՐԱՆ - Վերջին պահպանակին վրայ աւելի յետոյ այլ  
գրեչի մը կողմէ չէ զեղագրութեամբ զրուած է . «Ճեսող ամենայնի մեղայ  
քեզ . լուսոյ հոգի մէրս մեռաւ Ռիմի (1242+551=1793) ած ողորմի հոգուն  
յուլիսի 17 (արաբական թուանշան) վարդելվառի մեռելոց օր» :

Արարական թիւ նոյն պահպանակին տակը՝ 9481 :

Թերթ 233ր-ի վրայ նոյն գրիշին կողմէ աւելցուած է .

«ածյ ծառայ տիրացու սահակին հասցէ :

Նոյն տեղ .

«Գառն այ որ առաքեցար ի հօրէ բառամալ զենդս աշխարհի  
քաւեա եւ թող զյանցանաց դենդս ծառայիս ըտ . . . .  
երկուսամ առաքեալք քի սր . յորժան նոտիք աթոռ  
դասողական ընդ ձերում զուք բարեխօս լերուք նմայ  
վասն մեղաւոր ծառայիս այց» :

## Զ Ե Ռ Ա Գ Ի Բ Թ Ի Ւ 14399

### ՃԱՇՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ

(Արծարապատ)

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ - Նիւթը թուղթ , ողորկ եւ փայլուն : Գրաքիւն՝  
բոլորգիր եւ երկսիւն : Պահպանակ՝ մագաղաթեայ , հինգ առջեւ եւ հինգ ե-  
տեւ : Թերթի՝ 212 : Գրիչ՝ Նիկոլոս : Տեղի՝ Բջնի : Համգամանեակ՝ գերազանց :  
Լուսանցագարդեր՝ շատ յաճախակի եւ հարուստ կենդանային եւ թոշնային  
ժօթիսներով : Տիշատակարան՝ ունի : Թուական՝ Ռիմի (1730) : Մեծութիւն՝  
22×17×4 ամ . ։ Բովանդակութիւն՝ չորս աւետարաններ : Կողք՝ արծաթապատ :

ԿՈՂԹ . Առաջին կողքը կը կրէ Ցիսուսի խաչելութեան քանդակը եւ  
չորս անկիւններուն (Դ) Դաւթի , (Ս) Սողոմոնի , (Ե) Երեմիայի , (Յ) Եղեկ-  
իէլի դիմաքանդակները : Ետեւի կողքը կը կրէ Քրիստոսի յարութեան քան-  
դակը - յարութիւն ի գերեզմանէ եւ պահպանք զարհութեալք : Չորս ան-  
կիւններուն կրկին քանդակուած կան (Յ) Յովհաննէս , (Ա) Մատթէոս , (Ղ) Ղուկաս , (Մ) Մարկոս աւետարանիչները իրենց համապատասխան նշաններով՝  
արժիս , հրեշտակ , ցուլ , առիւն :

Մատթէոսի աւետարանը կը բացուի գեղեցիկ խորանով մը եւ տպա-  
ռորիչ լուսանցքի զարդերով : Հանդիպակաց էջին վրայ Մատթէոսն է նառած  
գրեշը ձեռքին ։ Նոյն արծարանը կրկնուած միև կրեք աւետարաններու սկիզբը :

## ՅԻՇԱՏԱԿԱՄԱՆ -

«Արդ եւ արուազն եւ անպիտան  
Հողս մոխիր եւ անարժան  
գծեղ աղաշին զամենեսեան  
հայցել մեղացն իմ թղթեան  
Նիկողոսին գէշ անպիտան  
փառք անսկիզբն եւ անզգական

յասն որոյ եւ են մեղապարտ ովի Նիկողոս անարժան  
ծառայ ծառայիցը այ. յանձն առեալ յուգով չափ  
կատարեցի դառաս հոգէշունչ ածաղարդ  
ածախօս որ Աւետարանն . . . .

Քիրեցաւ սր աւետարանն ձեռամբ նուռաստ եւ յետին անարհեաս գրչի  
Նկոսի մեղապարտի. ունայնագործ մելանաւորի ի բոււարերաւթեան առջա-  
նազեան եւ արեթական տոմարի Ուձնիթ ի ըստոյգ եւ յընակիր օրինակի. զի գա-  
ղափար սորին իր ի դրանէ ամենասրբութեալ Ածննի եկեղեցոյն իր ի Բիշնի  
կառուցելոյ. ի ճեռանէ առուցեցեալ Մովիսէ արք եւ քաջ Գիլեանփայէ եւ  
իմաստախուն եպիսկոպոսի : Ի յաշխարհին յարարատեան. ի քաղաքին Երե-  
ւան. ի գիւղն Բիշնի. ընդ հովանեաւ ամենասրբոյ Ածննին :

Ի յառաջնորդութեան սր աթոռոյոյ Դաւթի արհի եւ պանծալի եպս. ի  
եւ իմաստութեան ցանկացողի :

Ի հայրապետութեան հայոց տեառն . . . չնորհազարդ եւ քիւսանկար  
սր Աթոռոյն էջմիածնի : . . . . .

Յիշատակարանը կը չարունակուի մօս եօթը սիւնակով սր սակայն  
պատմական յատկանչական գէպքեր չեն արձանագրուած :

Ձեռագիրն կը պահուի պրաթեայ ծանի սնուռուիկի մը մէջ, գմբէթա-  
ւոր եւ տապանակի ձեւ, յատկապէս պատրաստուած եկեղեցայ խորանին վը-  
րայ զետեղուելու համար: Մնուուկը քանդակաղարդ է սուրբ Գրիգորին այլա-  
զան դրուագներու պատկերներով:

Երկու նամակներ կան ձեռագրին մէջ -

ա. Զօնի գիր մը ստորագրուած Պ. Իիւլպէնկեանի եւ Մ. Գարակէօդ-  
եանի կողմէ, 1919 թուակիր, ուղղուած ամերիկացի մեծ բարերար Գլիմլէնա  
ծօնի, հետեւեալ ձեռով -

The Word of God

to a

Man of God

Philanthropist Mr. Cleveland Dodge

New York City January 3, 1919

B. Gulbenkian

M. Kâragheusian

Dodge ձեռագիրը նուիրած է Բրինսթընի Համալսարանին :

բ. Անդրէն լեզուով նամակ մը թիւ 480 եւ 23 Օգոստոս 1922 թուա-  
կիր, ստորագրուած կը Պոլսոյ Զաւէն Պատրիարքէ: Գիրս զնահամուական եր-  
կարաշունչ նամակ մըն է ուղղուած Գլիմլէնա: Ծօնի, վերինոյ Մատուցած  
բարերարութեանց համար համբէկ: Հայ գաղթականութեանն և նամակը կը  
Սամանադրէ Պոլսոյ Մէջ հիմնադրուած “Cleveland Dodge, Home” որբանոցը,  
կառուցուած Ամերիկեան Նպաստանուայց Բնկերութեան կողմէն:

## ՀԱՄԱՅՆՔ

**ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԻ ԹՈւղթ:** Մեծաւրիմ՝ 9×40 սմ.։ Մանրանկարք՝ ունի: Ցիցատակարան՝ ունի: Երկրաբդ գրիչ՝ Ռվանէս: Ստացող՝ Գուշազար: Թուական՝ անյայտ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**ա. Մաղթանք Սուրբ Առառածածնի:** «Եւ արդ ի վերայ այսքանեալց» Նարեկէն:

բ. Հատուածներ բժշկութեան աւետարաններէն:

գ. Մաղթանք առ իննեակ դպու:

դ. «Հաւատով խոստովանիմ» Ս. Ներսոս Շնորհալիի:

Ասոնցմէ «Մաղթանք առ իննեակ դպու» ամբողջութեամբ կ'արտագըրենք ստորեւ:

### ԵՒՇԱՏԱԿԱԲՄԱՆՔ

ա. «Մբ. առաքեալց Պետրոս, բարեխոս առ տէր մեր յս քս, զի ողորմեացի իւրում ծառայի Գուշազարի, եւ փրկեացէ յամ փորձանաց երեւելեաց եւ յաներեւոյթ թշնամույ. մեղաց փրկեա, ի մեղաց աղատեա, եւ պահեսց մինչեւ ի կէտ կոչման իւրոյ անհոով խաղաղութեամբ եւ անօայթաքելի կենօք մինչեւ ի խրբն ծերութիւն, զարմօք եւ զաւակօք, որդւովք եւ զստերօք եւ ամ զոյական իրօք ծաղկեացուցէ (սրբուած եւ վրայէն նորէն գրուած) ծառայն այ Ովանէսին:

բ. «Քս ամենակալ իրբեւ արդարացուցանել կամեցաւ. և ոչ կամեցաւ խոտել զիւր ստեղծուածն. իրբեւ ետես չարչարեալ ողորմեցաւ. նոյն ողորմութեամբ ողորմեաց ծովուալութեամբ մվանէսին:

### ՄԱՆՐԱԿԱԲՄԱՆՔ

ս. Գեարոսի, Պօղոսի, Աստուածածնի, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու, Գարրիէլ հրեշտակապետի, Գրիգոր Լուսաւորչի եւ Ներսէս Շնորհալիի:

### ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ԻՆՆ ԴԱՍՍ

Արդ պաղատիմք առ հոգեղջնս, մեք որ տկարս եւ հողեղջնս.

Որք սպասաւորք էք այ ժաքուր բնութեամբ եւ կայանով

Մբ պաշտօնեօք եւ սպասաւորք, հողը բանին իւր կատարօղը:

Իցս երիս իննեակ դպուոք երրեակ եւ միածթեան:

Որդւոց մարդկան նախախնամող եւ յերկնայինս վերաբերողք.

Մանաւանդ մեզ ծանուցեալք զի երկրայնոց էք մերձաւորք.

Մբ Գարրիէլ եւ Միքայէլ հրեշտակապետք բարձրելոյն

Որք այ կայք առաջի մաղթել զմերն փրկութիւն

Ընկալարուք վեհք ի տնկաց, զընծայս բանի աղքատանաց,

Երբեւ ծովու կաթիլ մի ջրոյ, կամ եթերին նշոյլ ինչ հրոյ:

Զոր անմաշից աւուր տօնի մաշկանացուածս ձեզ ընծայի

Անմարմնական հոգեղինաց մարմնացրքս եւ հողեղջնքս

Բարեկախտից եւ երջանկաց թշուառականս եւ թարմատարս

Եւ յաննիաղ ձերում բարեաց փոխարեցէք մեզ ըզպիտոյս.

Զածային եւ զհոգեւոր զառ ի վերուստ չնորհաց զեղումն:

Մաղթելն ընդ մեր բարերարին գոր եւ ստնէք չ սկըզբանէ  
Զգործս ձեռաց քոց ասելով անտես ի քին ոչ առնելով։  
Զնոյն-պաղատան ի յայս աւուր խնդրեմք ի ձէնջ առանելուլ  
Յաղագս մերս եկեղեցւոյ եւ խնդհանուր ար հօնատոյ  
Երկրագուացու ընդ ձեզ հոգւոյ ամէնասուրբ երրորդութեան  
Խաղաղական չնորհել զկեանս, ի կրկնակի մեր ներհակաց  
Նաև զմերս անարժանից զպաղատանս այս աղօթից։  
Ձեր բուրգառօք իմանարիօք, խնկարիեսիք մեծարքոցին Ա  
Ուստի զրումն մաղթանաց յառատաձիր պարգևողէն  
Բարեխօսութեամբ սրբից Հրեշտակապետոցն Գարբիէրի եւ Միքայէլի  
Ողորմւա տէր ած ծառայիս քո Ուժանէսին։

ԶԱԿԻՆ Մ. ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Յունիս, 1971

Ֆիլադելֆիա



## ԶԻՔԱԿՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

### ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Սուրբ Գրոց փոքր հաւաքածոյ մը կը դանուի Զիքակոյի (իլինոյ նահանու, Միացեալ նահանդներ) համալսարանը, որուն մասին կ'արժէ ամփոփ կերպով խօսիլ ու հերկայացնել, տալով նաև յիշտակարանները:

#### ԹԻՒ 139 ԱԼԵՏՏԱՐԱՆ

Տեղական թուղթ, բոլորզիր, 6·5×9 մատնաչափ մեծութեամբ, կաշեպատ խաւաքարա Փերոպական կազմով, սկզբնապէս կարմրագոյն, որուն վրայ կ'երեւի թէ խաչ աղուցուած էր ժամանակին, դատելով զամերէն եղած ծակերէն: Ձեռազիրը վատ վիճակի մէջ է եւ կազմի ատեն կորատուած՝ լուսանցքներով, չունի յիշտակարան: Ակիզը կիպրիանու նամակը եւ կանոնաներու խորաններ: Էջ 7ա՝ Մարկոսի Աւետարանը կը սկսի եւ կ'աւարտի էջ 91ա Բ. սիւնին: Մատթէոս կը սկսի էջ 93ա, Գաւարոսի էջ 142ը Ա. սիւնի կէսին: Էջ 145ա՝ սկիզբ Ղուկասի, որ կ'աւարտի էջ 229ա Բ. սիւնին: Էջ 231ա կը սկսի Յովհաննէս եւ կ'աւարտի էջ 290ը::

#### ԹԻՒ 140 ԱԼԵՏՏԱՐԱՆ

Գրուած եւ բոպական թուղթի վրա, (ջրանիշեալ), բոլորզիր, Երկունին, կազեպատ տախտակ կազմով, զարդերէն կողոպտուած: Կը պակսին մանրանկարները: Խորաններ եւ լուսանցազարդեր զուրկ են արուեստէ: Համարարբառեալ չէ:

Էջ 209<sup>4</sup> Մատթէոս կ'աւարտի, ուր նոր գրչէն Մատթէոսի նախարանը: Ասոր կը յաջորդէն՝ «Ովկարզացօղք եւ ընթերցօղք ինձ մեղոոր դրչիս նիկողոս երիցու թողութիւն ինդրցէք եւ աստուած ալատէ զծեղ ի ձեր մեղաղն ամէն հայր»:

Էջ 209–210<sup>4</sup> պարապապ: Էջ 211<sup>4</sup> Մարգնոսի խորան եւ սկիզբ, կ'աւարտի էջ 340: Էջ 341<sup>4</sup> անմիջապէս Ղուկասի Աւետարան, նոյնպէս կոչտ խորանով, կ'աւարտի էջ 542 Բ. սիւնին, որուն ներքեւ, գրչէն: «ա(սառւա)ծ ողորմի կեռասին հոգոյն, որ ամ(ենայն) ժամ: Իմ կերակուր կուտար»:

Էջ 545<sup>4</sup> սկիզբ Յովհաննէս, որ կ'աւարտի էջ 680 Բ. սիւնի ստորեւ:

Էջ 681<sup>4</sup> գրչէն յիշտակարան. «Փառք . . . ի մերում ժամանակիս որ աւարտեցաք զս(ուր)ը մատեանս շարունակի ամք: Բ. Ծ. Բ. (1609): Արդ գրեցաւ չորքէ վտակեան աւետարանն . . . եւ փափաքեալ շանկացաւզ եղեւ ս(ուր)ը աւետարանիս տիրատուըն եւ իւր ծնաւղն ապրում: (Գիրը կը փոխուի) յարդուկին, կուլիորանին, սառային, նորպարոնին, Տեղիկին, մանուկին պետրոսին, խաչանուռնին, մայրամին: գոհարին: կողակիցին ժանուշակին, մեծի եւ փոքր առհասարակ, ամ(ենայն) ննջեցելց, աւետարանս զրին, իւր(ենաց) հոգոյն ի յիշտառակ ի ձեռն տ(է)ր խաչառուին: ի գիւղն տուռնաշային: ով որ ծախէ ՅՃԸ (308) հայրապետաց նայոնիեալ եղիցին եւ ամ(ենայն) արեան մերձաւորացն որ է ս(ուր)ը աւետ(ա)ր(ա)նս յիշտառակ ի գիւղն տուռնէ(ա)յին:

«Արդ եւ զրաւ սորա ժեռամբ անպիտան հողոյս կարապետ անարժան երեցու խանդալիցոյ դիրիչը ով յէք եւ քայլայալն յամբարի գործոց տառապ(եա)լ հոգիս ըստուերս։ Արդ յիշէք զծնալոս իմ, եւ զկողակի(g)ս մեր որ առ ա(ստուա)ծ փոխեաց որ ի զ(ե)ր(ա)մեր երախտիք եւ աշխատանք ունի, ով եղբարք հայր մէղա ասէք ա(ստուա)ծ առաւ չ եւ եղործած»։

### Թիի 781 ԱԽԵՏԱՐԱՆ

Տեղական թուղթի վրայ գրուած, երկսիւն, բոլորգիր: էջ 1ա՝ գրը-չէն. «Օգնեայ ինձ ա(է)ր եւ յաւարտումն սորա բարին կատարեա: Մատթէո-սի նկարին տեղը պարապ: էջ 2ա՝ Մատթէոսի խորանը եւ սկիզբը: Կաւարտի էջ 69ա Բ. սիւն, ստորին լուսանցքին գրչէն. «Վա՛յ, վա՛յ քեզ յ(ո)գ(ա)ն(է)ս մեղապարտ գրիչ»։

Էջ 70ա՝ Մարկոսի սկիզբ եւ խորան: էջ 69բ Մարկոսի նկարին տեղը պարապ: Ստորին լուսանցքին գրչէն. «Ո՛վնեա ինձ ա(է)ր ա(ստուա)ծ եւ յա-ւարտ ի սորա բարին կատարեա: Կաւարտի էջ 113թ։»

Էջ 114ա՝ պարապ Ղուկասի մանրանկարի տեղ: էջին ստորին լու-սանցքին, գրչէն. «Զակիսելոս իմ գու յաջողեա ա(է)ր ա(ստուա)ծ եւ աւարտ ի սորա բարին կատարեա: Ասոր ալ տակ անհետեթ գրշութեամբ, կարմը-րաւ. «Ընդդեմ. յիշել յաղոթը ձեր մահթէօսի յովաննես սերաստացի հընա-դեռ, վերջին տէրը՝ որ ճեռագիրը Զեքակօ վաճառեր է համարախնին: էջ 115ա՝ սկիզբ Ղուկասի եւ խորոն, կաւարտի էջ 190ա Բ. սիւնի ստորոտը: Յաջորդ էջը պարապ՝ Յովհաննու մանրանկարին տեղ»:

Էջ 191ա՝ խորան եւ սկիզբ Յովհաննու, որ կ'աւարտի էջ 249ա Ա.-սիւն. «Փառք ք(րիստոս)ի ամենազօր յարութեան»:

Էջ 250ա՝ գլխաւոր յիշաւակարան. «Փառք...որ ես կարողութիւն(ա) Յովհաննու պիտականուն սարկ(աւ)ադի հասանել ի վերջին կէտ ա(ստուա)-ծախօս աւետարանին: Շնորհօք տ(եառ)ն սկսն եւ ողորմութ(եամ)բ նորին կատարեցի. ի թուականութեան(ան) Հայոց Խօժք(1670)ին ի հայրապետու-թեան(ան) տ(եառ)ն Պետրոսի սրբազն կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի (վրան աւելցր-ւած) աղուանից եւ ի եպիսկոպոսութեան(ան) երկրիս շամքուու Յովհաննի, ծաղկոցի ո(ուր)ը ա(ստուա)ծածնի:

«Արդ ցանկացող եղեւ ս(ուր)ը աւետարանին Խուրան անուն կու-սակրոս ապաշխարողն, Ցիշատակ հոգոյ իւրոյ. եւ ծընողացն իւրոց: Հօրն ս(ա)րգսին մօրն թիշիսանին եւ հարազատ եղարացն իւրոց Սահակին, Աբրա-համին եւ քիթրցն (կարմրա վրան աւելցուած) Մարեանին, Մարինոսին, եւ Գօգ(ա)լին: եւ հարսներին, Շահյուսումին, եւ մարիանին: Եւ զաւակաց նո-ցին. Վանին, Ղարամին, Զաքարին, Խաչատուրին, եւ Գասպարին. եւ գոտե-րացն (վրան կարմրա) Ժարախոսին, եւ Նազուախանին: Հուտումին: Փարին: Հերիքնացին: Թուրիծամին: Հերիխսանին: Այլ եւ պատոյն Վանին եւ կողակ-ցին նաներին եւ միւս պատին Ղարամին: Այլ ամ(ենայն) արքանառու մերձա-ւորացն նոցին: Կենդանեացն կեանք եւ առողջութիւն(ա) տացէ ա(ստ-ուա)ծ մեր: Եւ նաջեցելոցն, հանդիս եւ արքայութիւն(ա): Ամէն:

«Կրկին աղաշեմ զձեղ ով հայր եւ եղայը յորժամ հանդիպիք ս(ուր)ը մատենեիս. Եթէնչէք ի մաքրափայլ և սրբանուէր յազօթն ձեր: Զվե-րոյ գրեալ կուսան Տալիթայն. որ նըրմենունդ սրտիւ, եւ եռափափակ սի-րով: Ստացաւ գու(ուր)ը պաւա(ա)ր(ա)նս: (Կը շարութակուի կրօնական մաղ-քամեներով):

«Դարձեալ յիշէցէք զկուսակրօն Խ(ու)բանէ պապաշխարոտին, եւ հո-

բնակույթի մարտիրոսներ, Առ որդէքն ն(ո)ց(ա) Ղազարն ոք առ ք(րիւառ)ս է Հանգուցեալ յիշեցէք եւ ողորմի... (Մնացեալը զրեք անրեքեանելիք):

### Թիի 899 ԱԼԵՏԱՐԱՆ

Երկաթաղիր մտղաղաթ երկսիւն Աւետարանի մնացեալք, 28 թերթ: Արդիական կազմ Հաւատարար ԺԱ Դարին: Երբեմն գրչէն հին բուրդրով յաւելումներ: Հաւատածներու բաժմանմանց համար գունաւոր կլորակներ: Էջ 12ա Ա. սիմին կարմրաւ իւ կապտիւ պարզ զարդ մը:

### Թիի 951 ԱԼԵՏԱՐԱՆ

Արծաթակազմ, ներսէն առատարուած ուզածոյ կարմիր մանրածաղիկ լաթով: Բոլորդիր, երկսիւն: Սաղկեալ Կո մանրանկարեալ: Աւետարանը կ'աւարտի էջ 281ա, որմէ վերջ դրչէն կիխաւոր եւ միակ յիշատակարանը. «Գրքաց ու (ուր)բ աւետարանն. թիին թձժ. (1661) ամի. ձեռամբ Վրդ(ա)ն(է)» անարժանին: յիշել պզաչեմ զմեղոյն:

### Թիի 949 ԱԼԵՏԱՐԱՆ

Մազազաթեայ, Ֆրկսիւն: Տափտակ կաշեկազմ: Գարեղին Սրբ-Ծովաչիւն զրած է այս ձեռագրին մասին «Մի Զեւագիր Աւետարան» իր հնիք-թեր և Շւարմանափութիւններ պրակներու շարքին թիւ Բ-իւ մէջ, ուր ձեռագրին զրչութեան մասին կ'ըսէ ասեցման երկաթաղիր: Ան ձեռագրին մանրանկարչութիւնը ներկայացնեցած է: Խսկ ձեռագրին մասին կ'ըսէ. «Ճարա-բարդարար ձեռագիրը վաս է պահուած, յատկապէս մանրանկարները, որոնց ներկերը շատ տեղ թափած են»: Ատշելութեան շուրջը գրաւած յիշատակարանն էլ անընթեռների է զարձած, որից, զուցէ, կարելի կը լինէր մի լոյս ստանալը (էջ 59): Մենք հոգ կու պանց ձեռագրին բոլոր յիշատակարանները կարելի եղածին շափ:

Սկիզբը, Մկրտութեան մանրանկարին ետեւ, Հապիւ բնթեռների.

ու մարծանս Մամիկոննեան  
բամ շիկայշարա ա(ստուա)ծածին  
որ էս՝որ առաջ եղել մէջում յարկ  
ից զէս եկեղեցին ընդ խորանի  
են արարեալ արդ մէք զէս խոսացէք  
ուղղէկանարայ ա(ստուա)ծածինն եւ  
յիւր հոգովն ի ծարբանորորոց(?) եւ ով(ի)  
զարաւորը եկեղեցոյ Դ(4) աւր ժամ ջ.....  
ին Ա(1) աւրն հաւը մերոյ հասանայ եւ.....  
աւըն եղաւը մերոյ տեւաղէի եւ  
Բ(2) աւըն մաւը մերոյ Մամիաթու(նին):  
Արդ թէ յիմոց կամ յաւարաց  
կամ ելազգեց զէս գիրս խափանել  
ջանայ ու զէս եկեղեցին ել ընդ Հարկիւ  
անել ջանա մեր ազգի ու առակ ի մեղաց  
ամէր եղիցի մասն եւ բաժին ընդուն-  
եցին եւ ընդ արփուն առցէ  
գրեցաւ գիրս ի թվ.....»:

իջ 13ա՝ կանոնախորանին մէջ. «Յիշեռ տ(է)ր ա(ստուա)ծ զիշեատիս եւ զյովսէփ»:

իջ 15բ՝ «Եւ տեսայ զա(ստուա)ծայշունչ կենսատու կարմիր ս(ուր)բ աւետարանս. յաւթեցաք ընդ Հովան զաւըութե(ան) չնորհի սորա. եւ զովացաք ա(ստուա)ծայ ձեր ամէն այլի բարեաւք սեղանոյս. տեսաք զիշատակարան սորա հոսուատուն պայտագատ հայրապետութ կրկնակ եւ եռակի կատարեալ արամ(բ)ք վկայեալ զվաղուց ստորպայրանութիւնն ի ս(ուր)բ յաւետարանս գրել էին եւ մեք սորոյդ բանիցո որ ի թագավորաց հայրապետաց հատատեալ կայր հաւատով ընկալաք ..... հայրենական տաեալ եւ ..... ողորմի ասէ թէ տ(է)ր ա(ստուա)ծ ..... հայրապետա .... թող ձ. .... եւ ա(ստուա)ծ զծերն թողու իւր միւսանգամ գալըստանն:

«.....թվ(ին). Զ-իդ

.....եւ ի Փ գրեցա (1461):

իջ 83բ՝ անցման երկաթագրով. «Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ողորմեայ Գրիգորոյ եւ ի Վարդանայ .... շին որդեացն ստացաւզաց ս(ուր)բ աւետարանիս ամէն»:

իջ 83բ՝ արդի բոլորդիր. «Արդ զայս սուրբ՝ աւետարանս 1914 թիւ համայստիրային եւ մոռմ Տաճկական պատերազմի ժամանակ ը(ն)կեալ ի ձեռն Տաճկաց գերի, եւ արդ ես Ալաշկերտցի բերթիցի Մուշեղ Դաւիթեանը զնացի 1916 թւին Ալաշկերտ եւ զոտայ այս ս(ուր)բ աւետարանը ի ձեռն Խաշընցի Յովհաննէսի Բաղդասարեան: Աւատի զայս ս(ուր)բ աւետարանը ին պապերից ինձ Թողնելով ես վճարեցի յիշեալ Յովհաննէսին 10 թորիի Ռուսական փող եւ բերեցի Ռուսաստան Երեւանի նահանք Նոր Բաեազէտի չընան Գրդմաշէն գեր ի 1916 թ(ուին) Ցուկիս 1ին: ա Կ 10 \*

« 1916 ամի Մնացական Մուշեղ Դաւիթեանց եղինակ 10 տարեկան սոյն թիւն Միւրանը եղել է 7 տարեկան իսկ Անդրանիկը ծննեց 1916 Մնացականը 1906 թ(ուին), Միւրանը 1909 թ(ուին) յիշեցէ այս .... եւին....»:

իջ 84ա՝ թուրբարիր. «Արդ զվերշին ստացող, ս(ուր)բ ա(ստուա)ծայշունչ աւետարանին. զդարբերդցի խաւան Սաւարն, որ ստացաւ զս(ուր)բ աւետարան. ի հայալ ընչից եւ արդար զատումկին յիշատակ իւր եւ բարի ծընաւզացն իւրոյ հաւըն աստուածատրին եւ մաւրըն կուշատին, եւ եղբարցն, մալիճանին, եւ հանգուցեալ եղբարցն աղիիճանին ալթունին, եւ քըւերցն, մազալին, խաթունփաշին եւ թամամին. Դարձեալ յիշեցէ զնօմայ Սաւարն որ ի գառն եւ ի վիշտ ժամանակիս. որում ամի շարժեալ էր ի վ(ն)ր(ա) ազդիս հայոց անհընարին բարկութիւնն եւս առաւել ուվ եւ սրածութիւնն ք մէկ ս(ո)մ(ա)ր ալիրն ի ի (7) խառ ելա ի կարս քազաք. բայց ա(ստուա)ծասէր եւ հիւրընկալ բարիմիս եւ ողորմած ի տուրս տերունակաց խաւան սաւարն յիշեցէ ի ք(րիստո)ս որ ստացաւ. զս(ուր)բ աւ(ստուարան) յիշատակ իւր եւ կողակցուն իւրոյ Փաշաճանին եւ տրդացն քասապարին եւ մելքոնին, եւ զստերացն մարիանին եւ շահիճանին, եւ եղբարցն մալիճանին, եւ կենակցին կուլճանին եւ զստերացն հռուբրիմին եւ Պէկատին, եւ հանգուցեալ եղբարցն աղիճանին ալթունին. եւ ծնողացըն հօրն աստուածատրին եւ մաւրըն կուլչատին եւ ամենայն արեան մերժաւորացն որ առ ք(րիստո)ս են հանգուցեալ ամէն: ով յիշէ (պատաճ) առ ա(ստուա)ծ»:

իջ 139ա՝ հին թուրբարով. «Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ողորմեայ երուց պատուական քահանայից Գրիգորոյ եւ Վարդանայ ստացողի սր աւետարանիս ամ(չն)»:

Էջ 139ա՝ տարրեր բոլորդրով. «Զվերջին ստացող ա(ուր)ը աւետարանին զտ(է)ր նշիայ ի գերութիւն էր մատնել յետ առի հալալ արդեանց իմոց ետոյ յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց. հաւըն իմոյ Մարտիրոսին, եւ մարն իմոյ ջամլին, եւ եղբաւըն իմոյ մէջլիսին, եւ եղբաւը որդացն իմ. հայրապետ արեղայի, եւ փոխեցելոյն առ ք(րիսոտ)ս, պաստամին. եւ այլ ամ(հնայն) արեան մերձաւորացն իմ հայրական արեղայի, եւ Վարդան սարկաւագի, ամէն եւ այլ աղաչեմք գհանդիպողք ա(ուր)ը յաւետարանին, կարդալով կամ զաղարար առնելով յիշեցիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյդրեալ եւ ա(ստուա)ծ զմեղ յիշէ իւր միւս անդամ զալստեան ամէն: Զգծող սակաւ յիշատակարանին. զԱ(ա)րդիս եպի(ի)սկ(ո)պ(ա)ս որդի պ(ա)րոն պաստամին յիշել աղաչեմ ի ա(է)ր եւ յիշողացա ա(է)րն ողորմեսցի եւ նմայ փառք անլուիլ»:

Էջ 236թ՝ հին բոլորդրով. «Երկուք եղբարք պատուականք եւ ընտրեալ քահանայք որ ըստացան զս(ուր)ք աւետարան ի հալալ ընչից իւրեանց յիշատակ ինքեանց եկ ծնողաց իւրեանց: Վարդան եւ Գրիգոր որդիքներ աշխին:

«Ք(րիսոտ)ս ա(ստուա)ծ ողորմէն նոցայ յիւրում զալստեանն ամ(էն)»:

Անդ, բոլորդիր, սկիզբի մէկաւէկս տողը Ծնուած՝ «...յորժամ տեսայ զկարմիր աւետարանն. կամեցայ ընթեռնուլ զիշատակարանն սորա նայ ինքն կտրուել էր ի չար մարդէն: Հարցի ի զհայրապետ արելին, թէ ինչի է կտրած յիշատակարանը, նայ ասաց թէ թշնամի մարդ է արարել թէ չեն իմ. վկայ կայ որ թէ պապին զնած է ու մեր ազգին է, Հարցի թէ վկայն ով է նայ ասաց թէ վարդիկն է, ինքին որդին. զնաց ու երեր. նո էլ Հարցի եւ զիկայութիւն նորա լսեցի, նայ ասաց. թէ ես ի հոգովս հէնց վկայեմ որ իմ պապէն լսել եմ թէ կարմիր յաւետարանն, հայրական երեցոյ զնուած է: Ին նշանովն որ մեծին ամիր Հասանայ գիմեալ էր ի ճանապարհի. Ամեաղարայ հայրն ու յաւետարանն ի շալակն. ♡(ա)րոնն հարցեալ էր թէ այդ ինչ է ի շալագիդ, նայ ասել էր թէ իմ ա(ստուա)ծն է կու տանիմ ծախեմ վ(ա)ս(ն) պակասութի(ան) պատճառի, նայ ծախեց ու հայրական երեց զնեց: էն նշանաւն որ գնումն մին կարմիր եղն երես եւ այլ բազում ինչք. Վարդիկին վկայութի(ւ)ն այս է երդամամբ վկայեաց: իս Հարցման վկայ. ճանապիրայ որդիքն շահպէնսէ ու փիրիկն վկայ: Դաւիթ արեղին վկայ է. դալիկն վկայ է:

Էջ 236թ՝ արդի անհամ գրչութեամբ. «1915 ամի Դեկտ(եմ)ր(էր) 20ի յենք Ալաշէկերուու շրմանի ժողովուրդ գաղթեցինք եւ փախանք Ռուս կայսրի հովանարութիւնն տակ սոր էջմիածին նահանդ կամ շրման բնակեցանք Գէշրուու գիւղ այս սոր. կարմիր աւետարան բերդից քրդեր հէսիր տարան Հայտար օղլի ըսուած քրդու գիւղ եւ այն տեղից ապատեց առաւ եկաւ Խաչուեցի Յովանէս Բաղդատարեան Յակոբեանց ի սէր քրիստոնէութեան»:

Էջ 237ա՝ բոլորդրով. «Անուամբն յա(ստուծո)յ ամենակալին: Սև հայրական երեցս զնեցի զս(ուր)ք աւետարանն. Սեւադայ որդոյ Վահստանկէ ի հալալ արդեանց իմոց. յիշատակ ինձ և ծնողաց իմոց և որդոյն իմոյ Մարդար ք(ա)հանայի եւ այլ ամենայն արեան ազգականացն իմ: ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր եւ ա(ստուա)ծ զմեղ յիշէ իւր միւս անդամ զալստեանն ամէն»:

Էջ 313ա՝ գրչութեան երկաթագրով, միասին՝ «Ես արդ գայս անապատ կտակ եւ զդանամ անկողոսպելիք, զանձառ երկինք որ բարձեալ ունի զա(է)րն բոլորից, մեք Գրիգոր եւ Վարդան. Հարազարք տրուալ եւ նուսատ քահանայք ըստ ձեւ տեսակի կրանակուրք գոլով. ստացաք զընկերու պատել

քան զամենայն ինչո պատուականս ձեռաց մարդկանց գրելոց, զ (ուր) ը զա-  
ւետարանս, բազում խերեւէջիք ըստ կարեաց մերում, յորս եմք տեղակալ  
ի գլուխ (ի) սահմանաց Խաչենոյ ի ս (ուր) ը ուխ (տէն) Գանձասար մենաստան  
որ .... Դիէկիս Ախրյազան հ ... (առ) աշնորդութ (եան սր ուխ) տիս տ (եառ) ն  
Յո (վանիսի անյա) զթ վարդա (պետի) ա (ստուա) ծարեալ ... ի է պսակ եկ-  
ղեցոյ ք (րիստոս) ի մաղթեմք ի յաւկտելոյ ի սմա յիշեսնիք զվերորդեալքս ի  
տ (է) ը նաեւ զանուանս դշարագատքս ուչիմնէն եւ կարաւա մնամք աղաւթից  
ձերոց եւ զծնոզն մեր զիերգ փառաց եւ զնահանգուխտ եւ զայլ եղբարսա . եւ  
զքերս եւ զազգայինս մեր . քանզի մեք Գրբիգոր եւ Վարդան որպէս զփտիս  
եւ զընկան ամոլք բնդարաք զարաւը մշակին երկնաւորի . աւգնականութեամ-  
րըն ք (րիստոս) ի առ ի հերկեալ զակաւս սրտից ա (ստուա) ծայնոց ն սեր-  
ժանելոյ զինդ իւր ցորեանս որ յաղերոցդ էք ի ք (րիստոս) ի շաեական (շա-  
ւեկան) պտղոյս . Յիշեսնիք զմեզ եւ զամենայն յանձն ամրաբեալս ..... ի ձեղ  
նաեւ զարասնեալ եղբարքս մեր (միարան) ակիցքս համաւրէն զժերս եւ .....  
զորդիքացեալս ս (ուր) ը ուխ (տիս) յիշեալ լիջիք տ (է) ը յ (խու) ս անարդ նր-  
կար (ոդր?) ..... + չորս տող կտրաւած) ԱԶԲ (1233):

**Խաչելութեան նկարին շուրջ՝ «Եւ վարագութիւն...» և թանոսաց ընտանիքին դաստիարակութիւն...»:**

Ղուկասի մանրանկարին տակ՝ «Տիշեա դարաս նկարի; տրուպ Երէց» . Նոյնը նաև յունարէն եւ վրացերէն գրով :

Բուն պրատիկան յիշատակաբանը կը պակսի :

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

իմ ակնած տաէնս նոր ստացուած էր եւ ժատենագրարանի թի: շահ-նէր: Մեծարքէք է ձեռակիրս, Ստեփանոս Գոյներիցանցի գրածը ըլլայով: Բնադր բորբագիր, ճաղաղաթ:

Գրէլէն՝ «Ըստացողի սուրբ գրոց» զպատուական քահանայն զի՞ով-  
մաս՝ յիշենչիք ի ք (րիստո)ս ծնողիւք իւրովիք եւ ամենայն զարդիւք. ամէն:  
Այլ եւ բազմանեղ եւ յոքնաթշուռառ գրիւօ եւ զիմ ծնալոն եւ ըղղարմն եւ  
զուսուցիչն: և որ իիէն՝ յիշեալ լիցի յորորժութիւնն ա (ստուծո): ամէն»:

Գրիշն՝ «Հաստացող սուրբ գրոց պատառեական ք(ա)հ(անայ) եւ ըդ-ծնազս իւր եւ գրագմանեղ գրիշն եւ զծնազսն իմ, եւ ա(սոտուա)ծ զծեղ յիւէ»:

Զեռադրին վերջը, զրչէն զիտաւոր միշտակարան. «Փառք ամենա-  
ս (ուր)ք երրորդութիւն (այս) այժմ եւ յաւիտեան յաւիտենից ամէն»;

«Ծնորհը եւ ողոքմութիւն» փառաւորութիւնն եւ երկրպագութիւն մարդասէր եւ բարեխար երրորդութիւնն եւ մի ա(ստուա)ցութիւնն անար եւ որդույ եւ հոգւոյն սրբոյն յամենայն զոյից յաւիտեանա աւախտենից ամէն:

«Ըստ ամենատատ չնորհացն ա(ստուծո)յ անբաւապէս հեղեալ ի մարդիկ՝ բազմագիմիք են տեսակը բարեաց եւ ճանապարհ փրկութե(ան) ոռովք հնարաւորին ցիր եւ ճապաղ ախորժակը մարդկան աւրինակաւ իւիւք առ կցորդութիւ(ան) բարւոյն յարձակիլ . եւ այսու պատճառաւ ըստ չափոյ կարողութե(ան) յա(ստուծ)մ մերձենալ . եւ բարւոյ մասին իմիք հանդիպիլ : Որոց մեծն եւ նշանաւոր՝ արեամբ չափ նահատակին որպէս վկայիդն որ է

կատարեալագոյն առ ա(ստուա)ծ նշանակ սիրոյ եւ այլքն ըստ նմանէ կամ անմնական նուերք ա(ստուծո)յ որպէս ճգնդական ժութկալութիւնք ք. կամ առնկեր բարեգործութիւնք որպէս սէր. ողործութիւնն . խոնարհութիւնք . եւ այլ բազում ինչ՝ յայսպէս : Ընդ որս եւ յորոց ի բարեաց մասանցըն է եւ գիրս ա(ստուա)ծայինս ստանալ ի փառա ա(ստուծո)յ ի շահ անձին եւ յագուս հասարակաց . ի պայծառութիւնք լրման նկեղեցոյ . եւ ի կատարումն ա(ստուա)ծաւանդ կարգաց քահանայութիւնն . որ եւ տիրապէս մեջնոմիշաբար յամ(ստուծո)յ տուեալ ի մարդիկ մեր եւ ա(ստուա)ծային պարզեւ : Եւ յիս ա(ստուծո)յ փոխանակ ա(ստուծո)յ աւրինազքաւզ մարդկան և ուսուցիչ զկամս ա(ստուծո)յ : Որոց ծայրք և կատարումն ա(ստուա)ծայնոց տառիցն աւետարանս ս(ուր)բ : այլեւ պրակք առաքելոցն . նոյն եւ կաթողիկէիցն թուղթք (ընդ որս եւ չորեքտասան թուղթք պաւզոսի առաքելոյն) . ըստ որում ասէր թէ ք(բիստո)սին եւ խաւսի ընդ մեզ : այլ եւ հաւառ եւ ս(ուր)բ յապտնութիւն ս(ուր)բ աւետարանչին յովհաննու : Որ ունի յայտնապէս ճշմարտու . . . . . (բերք իմկած) . . . . .

«...նայն երախտաւորսն իւր եւ զուտուցիչն : Այլ եւ զյոքնամեղ  
զծաւզս ստեփ(աննոս) եւ զծնաւզսն իմ եւ զամենայն ազգատոհմն իմ եւ զու-  
տուցիչն եւ զամենայն երախտաւորսն իմ ողորմութիւնը գտանել յաշեղ ա-  
ւուրն համառաւտի ընդ ամենայն ս(ուր)բա ի տ(եառն)է մերմէ յ(իսուս)է  
ք(րիստոս)է . եւ որ յիշէ զվերոյցքեալքս ի բարին՝ ք(րիստոս)ա ա(ստուա)ծ  
որ մեծն է ի պարզեա բարեաց ըզիշաւզսդ եւ զյիշեցեալս՝ արժանի արա-  
ցէ ողորմութիւն(ան) իւրոյ որ է աւրհնեալ յաւիտեան յաւիտենից : ամէն :

«Ալլ եւ զայս դիր ի մըտի ուշիմ մտաւք քաջ սիրելին՝ թոման եւ այլը  
որք գայք զկնի զի մի լցին դասապարատաւզք քրեանքն յատենըն ք(բիստոս)ի  
այլ բարեխօսւս ու ընդ դէմ գայցէ սիրով հրամանըն ք(բիստոս)ի եկայք  
աւրհնեալը դուք հաւմբ իմոյ երկնաւորի՝ կատարիչչք զատուրիանին իմ զոր  
գրեցի՝ աշխատասէր մշակ բարի՝ զու յիս հանգիր զիս սիրեցեր ըստ քո կա-  
րի. ես ըղանեղ իսկ հանդինեմ ըստ իմ սրտի. Գրեալքս այս ա(ստուա)ծա-  
ւանդք՝ որ է հրամանեքըն ք(բիստոս)ի այլ եւ պրակք կաթուղիկիցքն եւ բո-  
վանդակ (թու). զթք պաւլոսի... յայտնութիւնն յոհ(անու) հիւսեալ ի սա...  
կարգի. ընտիր բոլոր բայիւք եւ գրադրի: Բէ ּ զնիմ ես զայ... վ(ա)ս(ն)  
իմ զործի... պարծիմ... հ... հաւց պարծի... մաս ստացաւ... ծառա... զոյի...  
որք գայք զկնի պարտիք խուզիւ քննաւզ լինել ներ արեսափ. որ ամբարեալ  
կան ի սոսա գրչի արուեստք լի ։ անթերի ։ արիանալ կարողապէսն եւ առա-  
ւել ի հոգեւորըն պիտանի. զի առաւրեայ մարմնեղինովը Հոգեւորըն կա-  
տարի: ըստ մեծի ճգնաւորին սուրբ եւագրի. որ համա... յեռահիւսէ ըղ(հա-  
րիւր)աւորն յարտի... (կցկտուր բառամասեր կը կարգացուին) ...:

.....նուու զայս սուզ բանը թում(ա)սիդ որ ըստ հոգեոյ եղբայր  
կոչէ. փոքր է սա ի կարդ զըրի եւ չէ պճնեալ ի զարդ բանի աւազականքն է  
խորշելի լոյս պատուիրանքն յանձն առնելիք: Նախանձ բարի կալ ի մըրտի. բա-  
րի գործովք լեբ հայիլ. ողորմութիւն(ան) նորա չնորհիք՝ որ զջանա նման  
զաւթի. ստորաքարչ զարքն ընկենացի եւ պատուելիքն յարգեսիք: Ի հարա-  
զատի իմ հոգեկան՝ աղերս բանի ողջունական: Սա է պատճառ սիրոյ յիշման:  
Տարտամիս ստեփանոսեան՝ որ մականուն իմ գոյներեան: Ելս ի մտի զնել  
այնքան գեղ տուր եւ առ.... (իմեկած թերթի պատճառաւ կը պակի).....»:

Ստեփանոս Գոյներիցանցի ծանօթ գրչութիւնները կը կրէն 1307-  
1358 թուականները, որով այս գրչութիւնը ժԴ. Դարու առաջին կէսին զըլ-  
ուած նկատելու հեք:

Ստեփանոս Գոյներիցանց եւ Ստեփանոս Երկայն կամ Յերկայն  
նոյն անձերը չեն, այլ՝ ապրեր Ստեփանոսներ, որով տեղիք չկայ և. Խա-  
շիկեանի կասկածանքին «Յիշատակարաններ» ժԴ. Դարու հատորին մէջ  
(Անձնանունների ծանկ, էջ 746, տե՛ս Ստեփանոս Գոյներիցանց): Գոյների-  
ցանցի նորագիւտ մէկ գրչութիւնն ալ կը պտնուի Թաւրիզի Հայոց Ազգային  
Եկեղեցական Թանգարանը:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

## ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

### ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

#### ԺԱՌԱՆԳԱՀՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԹԱՅԱՐԱՆԻ

Ամենապատիւ

Տ. Եղիշ Ա. Արքակոս. Տէրտչրեան  
Բարեխնամ Պատրիարք Մ. Աթոռոլու  
Երդուազէք

Ամենապատիւ Մըրաղան Հայր,

Ա Յէրախոսթեան յագոււկ արամադրու-  
թեամբ Զերդ Ամենապատուաթեան կը ներ-  
կայոցներ ժառանգաւորաց Վարժարանի եւ  
Էջծայարանի նիրկագամ տարհը ջանանի տեղեկա-  
զիրը, տարօւան պատկանէլի Հոգնաքին  
Հետ: Էնծայարանը աւարտող էւ միաբանա-  
կան իրենց ուժամբ ստորագրած վեց ընծա-  
յացուները աւելի պերճախօս իրականութիւն  
մըն են քան վարչական այս տեղեկագիրը,  
որը կը ներկայացնենք Զերդ Հայրութեան:

Արդարեւ երկար տարիներ ես սպէտք, է  
երթալ, թերեւս մինչեւ Զեր տեսչութեան  
օրերը, վերագտնելու համար նման ուրա-  
խալի երեւոյթ եւ բնումնալից արդիմք:

Էնծայարանի, եւ անկէ առաջ ժառան-  
դասերացի ընթացքները յաջողութեամբ ա-  
ւարտած բարհնորդ մեր ամրկաւագները կը  
ներկայացնենք Զերդ Ամենապատուաթեան,  
ինկրելով որ յանձնէք իրենց Վկնացականե-  
րը, արոնց արժանի հանա բոլորն առ իրենց  
յանասիրութեամբ, բարի վարդով եւ քըն-  
նութիւններու լաջոց արդիւնքուն:

Ինչպէս վաջ ծախօթ է Զերդ Ամենապատ-  
ութեան, երեք տարիներ առաջ ուսումնա-  
կան մեր ծրագրին մաս ըրինք երբայցերէն-  
ինի ուսուցումը, իրեւ կարեւոր եւ անհրա-  
ժեշտ լեզու մը: Ուրախ ենք յայտնելու որ  
վեց մեր շընանաւարտները առաջին հունձ-  
քըն են այդ ծրագրին, եւ թէ իրենց այդ յա-

ւելեալ գիտութիւնը մեծապէս պիտի նպաս-  
տէ բարձրագոյն ուսմանց հետեւելու իրենց  
փափաքին իրագործման:

Մեր տարին անցաւ յարաբերաբար խա-  
զող եւ արդիւնաւոր: Ժառանգաւորաց Վար-  
ժարատինի եւ Ընծարարանի դասընթացները  
Դատարուեցան մեծ կանոնաւորութեամբ.  
ուսուցչական կազմը նույիւածութեամբ եւ  
առանց որեւէ միաբացումի իրագործեց ու-  
սումնական ծրագրը:

Այս տարուան ընթացքին, ինչպէս ծրագ-  
րած Փինք երեք տարիներ առաջ, յատուկ  
չէ չու մը դրուեցաւ անդէրին լեզուի ուսուց-  
ման վրայ, եւ ուրախ ենք Զերդ Ամենա-  
պատուաթիւններն յայտնելու թէ մեր ուսա-  
նութեամբ նիրկիրդունկան որեւէ վարժարանի  
պահանջին չափով կը տիրապետեն անդէ-  
րին լեզուն, ինչ նոր մը նկատենք բացար-  
ձակ անհրաժեշտութիւն մը: բարձրագոյն  
ուսութեամբ մկանութեամբ նը համար:

Ետքմիամաժարպահն քնանքը օժանա-  
րի բացառիկ կանոնաւորութեամբ կազմա-  
կերպուեցաւ և չնորհի Հոգի: Յ. Արտա Արե-  
գայի նիգերձան, եւ առաջին անգամ ըլլա-  
ցով ամենօրեալ եւ քարաթական մարզանք-  
նիրէն կամ ունեցանք նաև դաշտաւանդին:  
մը լման ծրագրով:

Ֆրանսիան կենացը եւ դաստիարակու-  
թիւնը շարունակուեցան դասընթացքներով,  
ծրակաւարութեամբ և առար տեղեաց ծա-  
յալոյութեամբ: Կրնանք վասահեննել Զերդ  
Ամենապատուաթիւնը թէ եկեղեցամիրու-  
թիւնն ու բարեգաշտութիւնը գգալի մինու-  
յուրաք կը կազմեն մեր ուսանողական կեան-  
քին:

Այս առբերջանի ուրախալի գէպքերու շարքին յառակ հրանուանդով կ'ուզնէնք յիշել շենց հիմնարկիքը ժառանգուորաց Վարժարանի և Ընծայարանի վելէքս և Մարի Մանուկեան շինքին, որ կառարուեցաւ բացուոկի շուլով: Կը յօսանք 1973 թվականի մայիս առբախութեամբ և Հրբանդով բացումը կատարեց նայն շինքին, որ անոնք բացումը կատարեց նայն շինքին, որ անուարակոյ պիտի շըմայ բացումը նաև նոր շրջանի մը կըթական այս հաստատութենքն ներս:

Ուսանողական ներկայ առբերջանին, մեր վարժարանը բանեաւած էր ժառանգաւորաց չորս և Ընծայարանի երկու կարգերու:

Ընծայարանի երրորդ և շրջանաւորաց աստրանը ունէր վեց առբախուդ աներ, որոնց մէջ աւանանց առաջին կը հանդիսանայ Բարկաւագ Մանուկեան: Երկրորդ կը հանդիսանայ Պարգան Սարկաւագ Տառուրեան, իսկ երրորդ՝ Բարեչնոր Գարբրիէլ Սարկաւագ Թաշճեան:

Ընծայարանի Ասալին կարգը ունէր վեց աստրանիք աներ, որոնց մէջ աւանանց առաջին կը հանդիսանայ Տիրոցու Սարգիս Տառուրեան: Երկրորդ Տիրոցու նեսով Զեքինեան, իսկ երրորդ Տիրոցու Յակոբին:

Ժառանգուորացի Զորբորդ դաստիարակ ունէր առա ուսանողներ, որոնց մէջ առաջին կը հանդիսանայ Համբարձում Պարեան, երկրորդ Գրիգոր Աֆարեան և երրորդ Աւետիս Ալբունեան:

Ժառանգուորացի Երկրորդ դաստիարակ ունէր առա ուսանողներ, որոնց մէջ առաջին կը հանդիսանայ Հայկ Երկարթեան, երկրորդ Յորումիք Երկարթեան, իսկ երրորդ Յակոբին:

Ժառանգուորաց Երկրորդ դաստիարակ ունէր եօթ ուսանողներ, որոնց մէջ առաջին կը հանդիսանայ Սերոք Գայինաէրեան և Օննիկ Թէրզեան, իսկ երրորդ Յակոբին Կիրիկին:

Ժառանգուորաց Ասալին դաստիարակ ունէր առաներեք ուսանողներ, որոնց մէջ առաջին կը հանդիսանայ Վահագին Արմենիան:

Ասալին կը հանդիսանայ Հրանդ Կիւլինեան, Երկրորդ Արման կղիքեան և երրորդ Յակոպին Հէկիլեան:

Վարքի մէջ Զորբորդ դաստիարանին առաջնութիւն կը շահին Գրիգոր Աֆարեան և Համբարձում Պալեան երրորդ դաստիարանին Մուգաս Էօզնեան և Առաջին դաստիարանին Թորոս Սորյան: Ինդի Վարժարանի գարքի բարձրագոյն նիւշ ևսի Երկրորդ դաստիարակներ առաջնորդ առաջնորդ Սերոք Գայինաէրեան:

Հայերէն լեզուի մէջ առաջնութիւն կը շահին Ընծայարանի երրորդ դաստիարանին Պողոս Սրբ: Մանուկեան, Ընծայարանի Առաջին դաստիարանին Տիրու Գայինաէրեան, Զորբորդ դաստիարանին Աւետիս Ալբունեան, Երկրորդ դաստիարանին Հայկ Երկարթեան, Երկրորդ դաստիարանին Սերոք Գայինաէրեան, Առաջին դաստիարանին Տիրու Հայկի կարգին:

Անդերէն լեզուի մէջ առաջնութիւն կը շահին Ընծայարանի երրորդ կարգին Պողոս Սրբ: Մանուկեան և Վարդան Սրբ: Տառուրեան, Ընծայարանի Առաջին կարգին Տիրու Գայինաէրեան: Երկրորդ դաստիարանին Հայկ Երկարթեան, Երկրորդ դաստիարանին Սերոք Գայինաէրեան, Առաջին դաստիարանին Հրանդ Կիւլինեան և Յակոպին Հէկիլեան:

Արարերէն լեզուի մէջ առաջնութիւն կը շահին Զորբորդ դաստիարանին Աւետիս Ալբունեան և Համբարձում Պալեան, Երրորդ դաստիարանին Գայինան, Երկրորդ դաստիարանին Տիրու Հայկի կարգին Սէքեան և Հայկ Երկարթեան, Երկրորդ դաստիարանին Սերոք Գայինաէրեան, Առաջին դաստիարանին Արման Պալեան:

Երրույթերէն լեզուի մէջ առաջնութիւն կը շահին Ընծայարանի երրորդ կարգին Վարդան Սրբ: Տառուրեան, Ընծայարանի Առաջին կարգին Տիրու Գայինաէրեան:

Մէկ Հակիրճ այս առաջնութիւն կը շահին Զորբորդ դաստիարանին Սերուսի Ալբունեան և Համբարձում Պալեան, Երրորդ դաստիարանին Գայինան, Երկրորդ դաստիարանին Տիրու Հայկի կարգին Սէքեան և Տիրու Գայինաէրեան, Առաջին դաստիարանին Արման Պալեան:

մասամբ առանց որեւէ ծանօթութեան հայրէն լիւզուի, անոնցմէ շատեր տարեակըին խլեցին առաջին տեղերը իրենց դասարաններուն եւ բերին այնպիսի սրդիւնքներ որոնք պիտի ուրախացնեն տմէն Հայու ժիրտ։ Այս առթիւ մեր յատուկ չնորհակալութեան խոռքը կ'ուղենք ուղղել բոլոր այն բարերարներուն, որոնք իրենց մեծ ու փոքր նրաւիրասուութիւններով օժանդակեցին ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի նոր ծրագիրներու իրազործումին, — բայց յատկապէս Պարոն Տատուր Տատուրեանին, որուն անունը կը կրէ մա մը ամրողութեամբ մեր հաստատութեան այդ մեծ հայու բարոյական եւ նիւթական սքանչէլի օժանդակութեան։

Կ'ուղմնէ փակել մեր տեղեկագիրը լաւատես այն մաղթանքով, որ ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը զալիք տարիներուն շարունակեն հասցնել ու պատրաստել աւելի ու աւելի մեծ թիւով ուխտաւուր և կեղեցականներ՝ չորհիւ Զերդ Ամենասպատութեան հայրական խնամքին եւ տարձր Հովհանաւորութեան, որով ոչ միայն կը կ'երակակէք յատուկ դուրդուրանքով մեր կրթական կեանքը, այլ յանձն կ'առնէք Զերթանկագին ժամերէն տրամադրել ուսուցչութեան, որպէսզի Զեր անմիջական շունչին եւ ներշնչումին մէջ պատրաստուին Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երիտառ սարդ սերունդները։

**Մատէլով ի համբայր Զեր Ս. Աջոյն**

**Մնամ**

**Առնարհ որդի**

**ՇԱՀԵ ԵՊՍ. ԱՃԵՄԵԱՆ**

**Վերատեսուչ**

# ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(1970 - 1971)

ԵՐՈՒՍԱՂԵՑ

**Ամենապատիւ.**

Տ. Եղիշէ Մա Արք. Տէրտիւնան  
Քարեխնամ Պատրիարք Ա. Աթոռոյ,  
Հոգեչնորհ Հայրեր եւ  
Յարգելի Հանդիսականներ .

բնդհանուր տեղեկադիրն է որ կը ներկա-  
յացնենք բոյորիդ, Ամավերջի հանդիսական  
այս առիթով:

**ԱՇԱԿԵՐԾՈՒԹԻՒՆ -**

Աստուծոյ ողորմութեամբ դպրոցական  
տարեշրջան մը եւս բոլորցինք, որուն ու-  
սումնական, բարօյական եւ անտեսական

1970 - 1971 տարեշրջանի մեր աշակեր-  
տութեան ընդհանուր թիւը եղաւ 302, բաժ-  
նուած հևտեւեալ ձեւով -

Երկրորդական քաժին  
Նախարարան  
Մանկապարտեզ

31 մանչ	36 աղջիկ	համագումար'	67
96 մանչ	64 աղջիկ	համագումար'	160
38 մանչ	37 աղջիկ	համագումար'	76
		Համագումար աշակերտութեան'	302

Այս աշակերտութեան 257ը զաւակներն  
են երուսաղէմի Հայ գաղութին, իսկ 45ը  
բերուած են Թուրքիոյ ներքին զաւառե-  
րէն, որպէս դիշերօթիկ աշակերտոներ Ս. Ա-  
թոռին:

Համագիտականներ - Հայ Լեղու, Գրարար  
և Ալբարարար, Հայոց Պատմութիւն, Հայ  
Արուեստից Պատմութիւն, Կրօնագիտու-  
թիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, Հայ Մ-  
տենագութիւն:

Օտար Լեզուներ - Անգլերէն Լեզու և  
Գրականութիւն եւ Արաբերէն:

Գիտականներ - Մաթեմաթիք, Կենսո-  
բանութիւն, Ալբարագրութիւն, Քիմիա-  
բանութիւն, Բնագիտութիւն:

Վարժարանին Կիսամեայ Քննութիւննե-  
րը տեղի ունեցան 1970, Դեկտեմբեր 20-30,  
իսկ Ամավերջի Քննութիւնները կատարուե-  
ցան 1971, Մայիս 18-29:

Այս բոլորէն յետոյ իրենց ուսումնական  
աշխատանքերուն մէջ ունինք 5 ճախորած  
աշակերտներ որոնք կը կընեն իրենց դա-  
սարանները, իսկ մնացեալները կը շարու-  
նակեն յաջողութեամբ:

**ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԿԱԶՄ -**

Մեր Հոգեւորական եւ աշխարհական ու-  
սուցչական կազմը կը բաղկանայ 23 անձեռ-  
ք որոնք հոգեւին նուիրումով յանձնեն-  
ցին իրենց յանձնուած Հայորդիներու դաս-  
տիարակութեան գործը, որուն համար կը  
յայտնենք բոլորին խորազզաց ընորհակա-  
լութիւններ:

**ԿՐԹԱԿԱՆ ԾԲԱԳԻՐ -**

Հաս նախընթացի եւ Երկրորդական վար-  
ժարանի յաստուկ ծրապէրով ընթացանք,  
դասաւանդելով հետեւեալ ճիշերը -

Իսկ Վարժարանէս որպէս տարույս շըրա ջանաւարանիր, իրենց աւարտական միաս յախանճները կը սուանան գետեւեալ ութ սաւերը:

